

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՆԱ ՏԱՐԻԵԼԻ ԿՆՅԱԶՅԱՆ

ԼԵԶՈՒ ԵՎ ԳԵՆԴԵՐ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2018

ՀՏԴ 81'27

ԳՄԴ 81.2-67

Կ 624

*ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատվել է
որպես բուհական դասագիրք*

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության
ֆակուլտետի գիտական խորհուրդը*

Խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր
Ս. Գասպարյան

Գրախոսներ՝ բ.գ.դ., դոցենտ Գ. Մուրադյան
բ.գ.թ., դոցենտ Ա. Մաթևոսյան

Կնյազյան Աննա

Կ 624 Լեզու և գենդեր/Կնյազյան Ա.: -Եր., ԵՊՀ հրատ., 2018,
210 էջ:

Դասագիրքը նախատեսվում է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում լեզվաբանության մեջ մասնագիտացող բարձր կուրսի ուսանողների և մագիստրոսների համար: Կարող է օգտակար լինել դասախոսներին, գենդերային հիմնախնդիրներով հետաքրքրվող ընթերցողներին:

ՀՏԴ 81'27

ԳՄԴ 81.2-67

ISBN 978-5-8084-2290-2

© ԵՊՀ հրատ., 2018

© Կնյազյան Ա., 2018

Բովանդակություն

ԱՌԱՋԱԲԱՆ	5
ՄԱՍ 1	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ	11
1.1. Գենդերային հետազոտությունների զարգացման նախադրյալները լեզվաբանության մեջ	11
1.2. Լեզվի և գենդերի հետազոտությունների լեզվաբանական և հանրամշակութային ավանդույթները ..	16
1.3. Լեզուն և գենդերային կարծրատիպերը.....	42
1.4. Գենդերային կարծրատիպերը անգլիական հանրամշակույթում	48
1.5. Գենդերային անհատի խոսքային նկարագիրը անգլիական «կենցաղային» անեկդոտներում.....	59
ՄԱՍ 2	
ԽՈՍՈՒՅԹԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ.....	107
2.1. Հետազոտական աշխատանք	107
2.2. Գենդերային ընթերցումներ	126
Գենդերային հասկացությունների բացատրական բառարան.....	188
Հավելված 1.....	202
Հավելված 2	205

ԱՌԱՋԱԲԱՆ

Մարդկանց առօրյա կյանքը, կարծրատիպերը, անհատի դերային դիրքորոշումները, գործողությունների գնահատումը մեծապես պայմանավորված են գենդերային փոխհարաբերություններով: «Գենդեր» եզրույթը վերաբերում է հասարակության մեջ տղամարդկանց և կանանց զբաղեցրած դիրքին, նրանցից ակնկալվող վարքի նորմերին, հոգեբանական և սոցիալական առանձնահատկություններին: Այդ իրողությամբ պայմանավորված՝ այն ընկալվում է որպես «սոցիալական սեռ», քանի որ բացի կենսաբանական սեռից՝ հասարակական կյանքում առկա են տարաբնույթ կարծրատիպեր և երևույթներ, որոնք վերագրվում են կանանց կամ տղամարդկանց: Գենդերը բացահայտում է հանրամշակութային կարծրատիպերի, փոփոխվող դերերի, կարգավիճակների, վարքի տարատեսակ դրսևորումների և զգայական համակարգերի տարբերությունները:

Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում արդեն ավելի քան երկու տասնամյակ հիմնավոր հետազոտության է ենթարկվում գենդերային գործոնի դերը լեզվում: Ռուս գիտական շրջանակներում սեռի հանրամշակութային հասկացույթին առնչվող հարցերի ուսումնասիրությունները մինչև վերջերս ավելի շատ դիպվածային բնույթ էին կրում, սակայն ներկայումս բոլոր հիմքերը կան ասելու, որ գենդերաբանությունը լեզվաբանության մեջ կայացել է՝ որպես ինքնուրույն ուղղություն: Գենդերային

հետազոտությունների ուշադրության կենտրոնում են սոցիալական և մշակութային գործոնները, որոնք պայմանավորում են հասարակության վերաբերմունքը տղամարդկանց և կանանց նկատմամբ, անհատների վարքը՝ այս կամ այն սեռի պատկանելու առումով, կանանց և տղամարդկանց հատկությունների վերաբերյալ կարծրատիպային պատկերացումները, այսինքն՝ այն ամենը, ինչը սեռի հիմնախնդիրը կենսաբանության ոլորտից փոխադրում է կյանքի սոցիալական և մշակութային ոլորտներ:

Կանանց և տղամարդկանց բնորոշ գենդերային դերերը տարբերվում են բոլոր մշակույթներում: Գենդերային տարբերություններին վերաբերող որոշ կարծրատիպային պատկերացումներ համընդհանուր են բոլոր մշակույթների համար. դրանցից են ագրեսիվության, ուժի վերաբերյալ պատկերացումները՝ որպես տղամարդկանց տարբերակիչ առանձնահատկություն, ինչպես նաև թուլությունը, հնազանդությունը և զգացմունքայնությունը՝ որպես կանանց բնորոշ հատկություններ: Սակայն գենդերային հետազոտությունները ցույց են տալիս, որ ոչ բոլոր հանրամշակույթներին են հատուկ գենդերային տարբերությունների միևնույն դրսևորումները:

Գենդերը (սոցիալական կամ հանրամշակութային սեռը) լեզվաբանական կարգ չէ, սակայն դրա բովանդակությունը կարելի է բացահայտել լեզվական կառույցների վերլուծության միջոցով:

Հետազոտության արդիականությունը և կարևորությունը պայմանավորված են այն հանգամանքով, որ հատկապես վերջին տարիներին «գենդեր» եզրույթը ակտիվորեն շրջանառվում է ընդհանրապես և Հայաստանի Հանրապետությունում՝ *малыш на драве*, քանի որ գենդերային փոխհարաբերությունների

համաչափ զարգացումը լիակատար կերպով համահունչ է ընդհանուր ժողովրդավարացման գործընթացին: Քաղաքական և սոցիալ-տնտեսական բնույթի համընդգրկուն տեղաշարժերի հետևանքով շոշափելիորեն խորանում է գենդերային փոխհարաբերությունների անհամաչափությունը հասարակական կյանքում, որն էլ իր դրսևորումն է գտնում քաղաքական, իրավական, հոգեբանական, տնտեսական, սոցիալական, մշակութային, լեզվական և այլ ոլորտներում: Ուստի գենդերային տարբերությունների ուսումնասիրության խնդիրը առավել արդիական է դառնում, և գենդերային հավասարության պահպանումը առաջնահերթ է հասարակական կյանքի բոլոր բնագավառների զարգացման համար: Գենդերային փոխհարաբերությունները ներազդում են ինչպես մշակույթի, լեզվի, սովորույթների, այնպես էլ հասարակական կառույցների, պետական հաստատությունների կողմից որոշումների ընդունման վրա և ձևավորում հանրամշակութային կարծրատիպեր:

Թեև Արևմուտքում գենդերային հետազոտություններն արդեն հաստատուն տեղ են գրավել գիտաճյուղերի շարքում, սակայն Հայաստանում գենդերային ուսումնասիրությունները համեմատաբար նոր գիտահետազոտական բնագավառ են: Լայն առումով լեզվի և հաղորդակցության գենդերային հայեցակերպի հետազոտումը դեռևս մնում է ամենաքիչ ուսումնասիրված բնագավառը գենդերային հետազոտությունների ընդհանուր միջգիտակարգային ոլորտում:

Դասագիրքը կազմված է մագիստրոսական ուսուցման շրջանակներում տարվող «Լեզու և Գենդեր» դասընթացի ծրագրին համապատասխան և նպատակ ունի ուսանողներին ներկայացնել «գենդեր» գիտական հասկացության էությունը, դրա բովանդակությունը, գենդերային լեզվաբանության առանձնա-

հատկություններն ու ժամանակակից ուղղությունները, բացահայտել գենդերային կարծրատիպերի հիմքում ընկած մեխանիզմները: Իրականացվել է անգլիական անեկդոտների հանրամշակութային վերլուծություն՝ նպատակ ունենալով բացահայտել սոցիալական բնույթի և աշխարհի լեզվական պատկերի այն յուրահատկությունները, որոնց հիմքում ընկած են գենդերային կարծրատիպերը:

Դասագիրքը բաղկացած է երկու հիմնական մասից, բացատրական բառարանից և երկու հավելվածից:

Առաջին մասը (*Գենդերային հիմնահարցեր*) բաղկացած է հինգ ենթագլխից, որոնք անդրադառնում են գենդերային ժամանակակից հետազոտություններին: Դիտարկվում են նաև լեզվի և գենդերի փոխհարաբերությունների վերաբերյալ ուսումնասիրությունները լեզվաբանության մեջ, հանգամանորեն լուսաբանվում է «կարծրատիպ» հասկացությունը՝ որպես հանրամշակութային և լեզվաբանական երևույթ, ներկայացվում են անգլիական էթնոմշակութային կարծրատիպերը, պարզաբանվում են տղամարդու և կնոջ հուզազգացական վարքի տարբերությունների հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները և այդ տարբերությունների դրսևորման ձևերը հաղորդակցության խոսքային մակարդակում: Առկա տեսագործնական նյութի քննական վերլուծությունը թույլ է տալիս նկատել, որ գենդերային հայեցակարգի դիտարկման շրջանակներում հիմնական շեշտը դրվում է տղամարդու և կնոջ ոչ թե բնական, կենսաբանական տարբերությունների վրա, որոնք ի սկզբանե կանխատեսված են նրանց ֆիզիոլոգիական յուրահատկություններով, այլ նրանց սոցիալական հետաքրքրությունների, պահանջմունքների և վարքագծի վրա՝ չանտեսելով նաև գենդերային

հատկանիշների սերտ կապը հանրամշակութային յուրահատկությունների հետ:

Ենթագլուխների ամփոփումից հետո առաջադրվում են հարցեր, տրվում գործնական առաջադրանքներ, ինչպես նաև նյութը առավել արդյունավետ ընկալելու համար առաջ են քաշվում քննարկման թեմաներ:

Երկրորդ մասը (*Խոսույթի գենդերային հայեցակերպը*), որն ունի առավել գործնական բնույթ, բաղկացած է երկու ենթագլխից, որոնք ընդգրկում են լեզվաբանական հագեցվածություն ունեցող առաջադրանքներ՝ նախատեսված ուսանողի ինքնուրույն աշխատանքի համար: Իսկ գենդերային ընթերցումներին առնչվող հանձնարարություններն ընդգրկում են գեղարվեստական տարբեր ստեղծագործություններից քաղված հատվածներ, որոնցում առավելապես արտացոլվում է գենդերային այս կամ այն մոտեցումը: Ուսանողը պետք է այդ գեղարվեստական ստեղծագործություններից հատվածները ենթարկի վերլուծության և բացահայտի կանանց ու տղամարդկանց խոսքային տարբերությունները, գենդերային կարծրատիպերի հանրամշակութային առանձնահատկությունները, որոնք արտացոլում են արականության և իգականության վերաբերյալ սոցիալական պատկերացումները:

Բացատրական բառարանում ներկայացված են առավել գործածական լեզվաբանական և սոցիոլոգիական եզրույթներ՝ իրենց մեկնաբանություններով: Այսօրինակ եզրույթների իմացությունը մեծապես կնպաստի ուսանողի՝ մասնագիտական հաղորդակցական կարողությունների բարելավմանը:

Գիրքը եզրափակվում է **հավելվածներով** որտեղ ընդգրկված են արականությունը, իգականությունը և անդրոգենությունը բացահայտող թեստեր:

Դասագիրքը նախատեսված է ինտերակտիվ մեթոդներով դասավանդման համար: Ուստի առանձնակի նշանակություն է տրված ուսանողների ինքնուրույն աշխատանքին՝ զանազան խոսույթների, փաստերի և իրողությունների՝ գենդերային տեսանկյունից վերլուծությանը:

ՄԱՍ 1

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

1.1. Գենդերային հետազոտությունների զարգացման նախադրյալները լեզվաբանության մեջ

XX դարի լեզվաբանության միտումներից մեկը այլ գիտությունների, մասնավորապես՝ սոցիոլոգիայի, հոգեբանության, խոսքի գործաբանական հայեցակետերի հետ կապերի ընդլայնումն էր, որի արդյունքում ի հայտ եկան միջգիտակարգային հետազոտություններ:

Նախքան լեզվաբանական գործաբանության ձևավորումը գիտնականները սոսկ արձանագրում էին առանձին տարբերությունների առկայության փաստը, սակայն չէին հետազոտում դրանք: 1970-ականներին լեզվաբանական գործաբանության առաջխաղացմանը նպաստող մեծ քայլ կատարվեց՝ հենց գործաբանությունը և ժամանակակից հոգելեզվաբանությունը, մյուսներից առավել, սկսեցին արտացոլել անձի լեզվաբանական ճանաչողության օրինաչափությունները (Винокур, 1993, 20):

Հետազոտողները լեզվաբանական գործաբանության մեջ ուշադրությունը կենտրոնացրին խոսողի դիրքորոշման, նրա հաղորդակցային մտադրությունների, դրանց լեզվական ար-

տահայտչամիջոցների, հաղորդակցվողների խոսքային ռազմավարությունների ու մարտավարությունների վրա: Ի հայտ եկավ համընդհանուր ուղղություն, որը կոչվեց հաղորդակցական լեզվաբանություն: Լեզվաբանական գործաբանության ոլորտում սկսեցին հատկապես քննարկվել հաղորդակցման հասցեատերն ու հասցեագրողը: Հետագայում մեծացավ հետաքրքրությունը նաև անձի **գենդերային** բնութագրիչների նկատմամբ: Գենդերաբանների կարծիքով՝ դա պայմանավորված էր ինչպես գիտական հարացույցի փոփոխմամբ (անցումը կառուցվածքային լեզվաբանությունից գործաբանությանը), այնպես էլ սոցիալական փոփոխություններով (Кирилина, 1997, 15-20):

Գենդերային հետազոտություններում հայեցակարգային մոտեցումների մեջ կարելի է առանձնացնել երկու տեսություն՝ *սոցիոդետերմինիզմը* և *կենսադետերմինիզմը*, որոնք ըստ էության տարբեր կերպ են բնորոշում գենդերային տարբերությունները:

Ինչպես ցույց է տալիս տեսական գրականության քննությունը, սոցիոդետերմինիստների համար կարևորը գենդերի ճանաչողական զարգացման տեսությունն է, քանի որ գենդերային վարքին առնչվող ամբողջ տեղեկատվությունը այս կամ այն կերպ արտացոլվում է մարդու գիտակցության մեջ գենդերային սխեմաների տեսքով: Դրանցում առկա է այն ամենը, ինչը տվյալ մարդը գիտի գենդերի մասին: Նրա գիտակցության մեջ ձևավորվում են գենդերային կարծրատիպեր, որոնք էլ ազդում են տեղեկատվության վերամշակման վրա (Kohlberg, 1958):

Այս ուղղության շրջանակներում առանձնահատուկ ընդգծվում է *արականության* և *իգականության* վերաբերյալ պատ-

կերացումների սերտ կապը հաղորդակցային վարքի հետ: Այլ կերպ՝ դրանք ոչ թե ուղղակիորեն են արտացոլվում լեզվում, այլ գիտակցության միջոցով, որի ձևավորումն էլ գտնվում է լեզվի ազդեցության տակ (Картушина, 2003):

Գենդերի կենսադետերմինիզմի հայեցակերպի կողմնակիցները տղամարդկանց և կանանց վարքը, մասնավորապես հաղորդակցայինը, կապում են գենետիկ կանխատրամադրվածության և զարգացման գործընթացի արդյունքների հետ, շեշտում նշանակալի տարբերությունների կանխավարկածը և օգտագործելով նեյրոֆիզիոլոգիայի տվյալները՝ խոսում հոգեֆիզիոլոգիական տարբերությունների մասին՝ դրանով իսկ ապացուցելով ուղեղի բաժինների, հետևաբար և խոսքային գործընթացների կառուցվածքի ու գործառույթների տարբերությունների առկայությունը:

Այս հայեցակերպի կողմնակիցները, կարևորելով գենդերային երկու խմբի ներկայացուցիչների միջև առկա գլոբալ տարբերությունները (ֆիզիոլոգիական և սոցիալական), գենդերային տարբերություններն ըստ էության նույնացնում են սեռային տարբերությունների հետ (Пиз, 2000):

Գենդերային տարբերությունների քննությունը սոցիալական դերերի տեսության դիրքերից վեր է հանում հասարակական կյանքում անհատի սոցիալական դերի հաշվառման խնդիրը, որը գործոն է կանանց և տղամարդկանց վարքի տարբերությունները մեծացնելու կամ նվազեցնելու, ինչպես նաև սոցիալական և գենդերային կարծրատիպեր ձևավորելու հարցում (Eagly, 1987; Eckes, 1994; Fishman, 1978):

Գենդերի զանազան սահմանումներում *գենդեր* և *սեռ* հասկացությունները հաճախ տարանջատված են (տե՛ս Трофимов, 2002): Էնն Օյկլին, օրինակ, տարբերակում է կենսաբանական

սեռը սոցիալականից՝ գենդերային տարբերությունների առկայությունը բացատրելով ոչ թե անատոմիական տարբերություններով, այլ մշակութային տարրերի միջոցով տվյալ անհատին փոխանցված յուրահատկություններով (Oakley, 1972):

Կարևորելով սոցիալական հիմքի վրա ձևավորված արականության և իգականության յուրահատկությունները՝ որոշ հետազոտողներ փորձում են լիովին անտեսել անատոմիական և ֆիզիոլոգիական տարբերությունները (Giddens, 2001), մինչդեռ Օ. Ռյաբովը գենդեր և սեռ հասկացություններն ընկալում է ամբողջ-մաս հարաբերակցության դիտանկյունից: Մյուս կողմից նրա համոզմամբ՝ թեև սեռի հասկացությունը ներառում է կենսաբանական և հանրամշակութային սեռերը, նրանում չի կարող անտեսվել նաև սոցիալական բաղկացուցիչը (Рябов, 2002, 38):

Գենդերային լեզվաբանության բուռն զարգացումը հումանիտար գիտության մեջ պայմանավորված է տեսական նոր դրույթների յուրացմամբ: Հետազոտության սկզբնական փուլում գիտնականների ուշադրության կենտրոնում էին ընդհանուր մեթոդաբանական հարցերը: Վերջին տարիներին նկատվում է գենդերի հետազոտության մեթոդաբանական մոտեցումների բազմազանություն, որոնք հանգեցնում են դրա էության տարբեր ըմբռնումների ու կենսա- և սոցիոդետերմինիզմի կողմնակիցների միջև քննարկումների: *Գենդեր* հասկացությի՝ տարբեր լեզուներում ու մշակույթներում չհամընկնելը, ինչպես նաև չհամընկնելու հետևանքները միջմշակութային հաղորդակցություն իրականացնելիս նույնպես հետաքրքրություն են ներկայացնում գիտնականների համար:

Գենդերային խնդիրների քննության՝ վերը բերված տարաբնույթ տեսությունների ու մոտեցումների մեր ուսումնասի-

րությունը թույլ է տալիս նկատել, որ գենդերային տարբերությունների գիտակցումը կարող է էապես կարևոր դեր խաղալ համապատասխան փոխընկալում և փոխըմբռնում ապահովելու գործում ընդհանրապես և տվյալ մշակութային հանրույթի շրջանակներում մասնավորապես:

Գենդերի լեզվաբանական հետազոտության մեջ հարկ է հատկապես կարևորել բառապաշարին, շարահյուսությանը, ոճական տարաբնույթ արժևորումներին, ոչ խոսքային և հարախոսքային միջոցների կիրառությանը առնչվող հարցեր:

1.2. Լեզվի և գենդերի հետազոտությունների լեզվաբանական և հանրամշակութային ավանդույթները

Հանրամշակութային ավանդույթի շրջանակներում լեզուն մեկնաբանվում է առաջին հերթին որպես սոցիալական հարաբերությունների միջնորդ, սոցիալական նույնականություն արտահայտող, մշակութային արժեքները պահպանող միջոց, որն առավել վառ իրականացվում է հանրալեզվաբանության մեջ (տե՛ս Мечковская, 2000; Turner, 1988; Gumperz, 1982):

Պատահական չէ, որ տարբեր սոցիալական խմբերում տղամարդկանց և կանանց խոսքային վարքը հետազոտող Ֆ. Մաուտների համոզմամբ՝ գենդերային տարատեսակությունը լեզվում պայմանավորված է սոցիալական խնդիրներով (Mauthner, 1921): Այլ կերպ՝ լեզվի զարգացման վրա սոցիալական պայմանների ազդեցությունը դրսևորվում է նաև սեռերի խոսքային ու վարքագծային տարբերություններում:

Հետաքրքրական է, որ արականության և իգականության խոսքային դրսևորումների առաջին դիտարկումները կատարվել են ճանապարհորդների կողմից, սակայն հետագայում այս հիմնախնդրի միջգիտակարգային բնույթը գրավել է գիտական ամենատարբեր ոլորտների հետազոտողների ուշադրությունը (Oakley, 1972; Cameron, 2000 և այլն): Մասնավորապես Կ. Յունգը, արականության և իգականության հասկացությունները կապելով առասպելաբանական մտածողության հետ, դրանց մեջ տեսնում է երկու ներհակ նախասկիզբ՝ Անիմուսին և Անիմային (Юнг, 1996):

Ընդհանրացման արդյունքում Կ. Յունգը փորձում է տարանջատել արականության և իգականության բնութագրական գծերը: Նրա համոզմամբ՝ եթե տղամարդը պատրաստ է

մրցակցության, ապա կնոջը առավել բնորոշ է համագործակցության հակումը, եթե տղամարդը անհամբերության մարմնավորումն է, ապա կինը ջանում է համբերատար լինել: Տղամարդու քննադատական ոգին Կ. Յունզը հակադրում է կնոջը բնորոշ համաձայնողականությանն ու աջակցելու տրամադրությանը: Տղամարդու անկախ, պատվախնդիր, տրամաբանող, բանական ու բռնկուն բնույթին, նրա կարծիքով, հակակշիռ են կնոջ զիջողականությունը, մեղմությունն ու պասիվությունը:

Հետագայում գենդերային հետազոտությունների զարգացումը հանգեց մի քանի հիմնական ուղղությունների ձևավորման. գենդերը՝ որպես սոցիալական վերլուծության գործիք, գենդերի ըմբռնումը՝ որպես իգականության խնդիրների հետազոտության գործիք, գենդերը՝ որպես մշակութաբանական մեկնաբանություն և այլն (Клецин, 1997, 5-11):

Թեև լեզվի և գենդերի փոխհարաբերություններին առընչվող հետազոտությունները լեզվաբանության մեջ կանոնավոր և հետևողական բնույթ չեն կրել, և «գենդեր» կարգը լեզվի ուսումնասիրության դաշտում հայտնվել է XX դարի 80-ական թվականներին՝ ավելի ուշ, քան այլ գիտություններում, այդուհանդերձ բնական սեռի և քերականական սեռի միջև անվիճելի կապի գաղափարը երկար ժամանակ շրջանառվում էր: Դեռևս անտիկ շրջանից հայտնի բնական սեռերի (*sex*) և քերականական սեռերի (*gender*) կարգային իմաստավորումները, որոնք սերտորեն կապվում էին տարբեր սեռերի մարդկանց գոյության փաստի հետ, ըստ էության սկիզբ էին դրել սեռի (*genus*) կարգի խորհրդանշական-իմաստային ընկալումներին ու մեկնաբանություններին (ըստ Шахматкин, 1996; Ласкова, 2001):

Սեռային տարբերությունների խորհրդանշական-իմաստային կանխավարկածի հետևորդները եղան Վ. Ֆոն Հումբոլդ-

տը և ուրիշներ, որոնք զգալի դեր խաղացին՝ սեռային տարբերությունները լեզվաբանական ուսումնասիրության դաշտ տանելով, ընդ որում, ելակետային էր այն, որ արական սեռը համարվում էր առաջնային՝ շնորհիվ ուժի, ակտիվության, էներգիայի, իսկ իգականը, ընդհակառակը, որակվում էր պասիվությամբ ու ենթակայությամբ (Гымбольт, 1984):

Ինչպես վերը նշվել է, սեռային տարբերությունների հետ կապված լեզվաբանական հետազոտությունների իրականացման համար նախադրյալները շատ հուսալի չէին: Առկա էին միայն Կարիբյան արշիպելագի որոշ լեզուներում տղամարդկանց և կանանց խոսքի տարբերությունների վերաբերյալ հատուկենտ նկարագրություններ, իսկ առաջին իրական բացահայտումներն ի հայտ եկան XVII դարում և վերաբերում էին «նախասկզբնական» էկզոտիկ լեզուներին: Դրանք բնութագրական էին նրանով, որ այդ լեզուներում տղամարդկանց և կանանց արտասանության և բառագործածության տարատեսակների բաժանում կար: Գենդերային բազմազանության սակավաթիվ բոլոր նկարագրությունների համար ընդհանուրն այն էր, որ տղամարդկանց լեզուն դիտվում էր որպես բուն լեզու, իսկ կանանցը՝ որպես դրանից շեղում: Այստեղից էլ այն մեծ ուշադրությունը, որ հատկացվում էր ոչ թե տղամարդկանց, այլ կանանց լեզվի ուսումնասիրությանը (տե՛ս Macaulay, 1978; O'Barr, Atkins, 1980; Jones, 1980; Mills, 1992 և այլն): Հետազոտողների ելակետը տղամարդկանց ու կանանց միջև բնության կողմից կանխորոշված մտավոր կարողությունների տարբերություններն էին և այն համոզմունքը, որ տղամարդկանց ու կանանց խոսքի միջև առկա բոլոր տարբերությունները կենսաբանական սեռով էին պայմանավորված:

Տղամարդկանց ու կանանց խոսքի կիրառության ևս մեկ տարբերություն մատնանշեցին եվրոպացի հետազոտողները՝ այցելելով Հնդկաստանի արևմուտք, որտեղ արական սեռի անձանց հատուկ էր կանանց համար արգելված համարվող բազմաթիվ բառերի ու արտահայտությունների գործածությունը, իսկ տղամարդիկ երբեք չէին գործածում կանանց բառապաշարին պատկանող բառեր:

XX դարի սկզբին լեզվի գենդերային հայեցակերպի ու հաղորդակցության նկատմամբ հետաքրքրությունը փոքր-ինչ մեծացավ, և լեզվաբանության մեջ լեզվի ու սեռի թեման հայտնվեց գիտական առաջնահերթությունների շարքում: Դրան նպաստեցին մի շարք հանգամանքներ. նախ՝ նշյալ հիմնախնդիրը հետաքրքրեց համաշխարհային հռչակ ունեցող լեզվաբանների՝ Է. Սեպիրին, Օ. Յեսպերսենին, Ֆ. Մաուտներին, որոնք XX դարի լեզվաբանության մեջ մի շարք ուղղություններ էին հիմնադրել: Երկրորդ՝ լեզվաբանական նկարագրություններում առաջին տեղ մղվեց սոցիալական կյանքը, իսկ լեզուն դիտարկվում էր հասարակության և նրանում ապրող մարդու հետ կապի մեջ: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ հանրալեզվաբանության բնագավառում տղամարդկանց և կանանց խոսքային տարբերակների միջև առկա տարբերությունների ուսումնասիրության որոշակի փորձ էր կուտակվել այսպես կոչված «պարզունակ լեզուների» քննության հենքի վրա, և այժմ այն կիրառվում էր եվրոպական լեզուների՝ գերմաներենի, անգլերենի, ֆրանսերենի հետազոտական ոլորտում:

1913 թ. լույս տեսավ Ֆ. Մաուտների՝ լեզվի քննությանը նվիրված աշխատությունը, որում նա ճանաչում է գենդերային տարբերությունները գերմաներենում՝ դրանք հիմնավորելով սոցիալական ու պատմական պատճառներով: Այսպես՝ լեզվի

գործառությունը տարբեր սոցիալական ոլորտներում ուսումնասիրելիս Ֆ. Մաուտներին հաջողվել է պարզել, որ, օրինակ, գործարանային բանվորների շրջանում գոեհիկ բառապաշար գործածում էին բացառապես տղամարդիկ, թեև հասարակության ազնվական խավերում տղամարդիկ հայիոյանքների ու գոեհկաբանությունների փոխարեն օգտագործում էին մեղմասություններ, որոնք թույլատրվում էր գործածել նաև կանանց, սակայն այնքան ժամանակ, քանի դեռ դրանց մեղմասությային բնույթը պահպանվում էր: Նրա դիտարկմամբ՝ կանայք ավելի հաճախ էին կիրառում նաև օտար ծագման բառեր, ինչը գիտնականը պայմանավորում է կանանց ավելի պակաս կրթված լինելով, քանի որ նրանց համար ավելի դժվար էր մայրենի լեզվում գտնել այդ բառերի համարժեքները: Բացի դրանից՝ միայն տղամարդիկ են ունակ ստեղծագործաբար գործածել լեզուն, իսկ կանայք միայն յուրացնում են այն, ինչ ստեղծված է ուժեղ սեռի կողմից: «Կանանց լեզվի» ծագումը գիտնականը կապում է անտիկ թատրոնի ավանդույթների հետ, որտեղ սկզբնական շրջանում կանանց դերերը կատարում էին տղամարդիկ: Բեմում կանանց հայտնվելուց հետո միայն դրամատուրգիայի տեխնիկայում կատարվեցին փոփոխություններ, և կանանց հնարավորություն ընձեռվեց «հնչեցնելու» նաև լեզվի իրենց տարբերակը: Պատմական մոտեցումը գիտնականին հանգեցրեց այն հետևության, որ հասարակությունն ընդունեց «կանանց լեզուն» այն ժամանակ, երբ նրանց թույլատրվեց ելույթ ունենալ, որը վկայում է լեզվի հանրայնացման վրա սեռերի անիրավահավասար վիճակի ազդեցության մասին: Ավելի վաղ գենդերային բազմազանության հանրային տեսակետները հաշվի չէին առնվում (Mauthner, 1921):

Է. Սեպիրը, ուշադրությունը կենտրոնացնելով հնդկացիական ցեղերի լեզուների սոցիալական տարբերությունների վրա, քննում է հնչակարգության տարբերությունները մեկ ձևույթի շրջանակներում և մեկնաբանում դրանք որպես սեռի ազդանշան: Նա հանգում է այն եզրակացության, որ սեռն ու կարգավիճակը լեզվաբանական ձևի միջոցով կանխանշում են նորմից շեղվող խոսքը: Է. Սեպիրը եզրակացնում է, որ սեռը քոլարկված է լեզուների ձևաբանության մեջ (Sapir, 1915, 101):

1922-ին Օ. Յեսպերսենը ավելի լայն է քննում սեռի ինքնատիպ հատկանիշները լեզվում՝ հիմնվելով Կարիբյան արշիպելագի կղզիներում ապրող հնդկացի տղամարդկանց և կանանց լեզուների մասին տարբեր առաքելությունների ներկայացուցիչների տեղեկությունների վրա: Նրա կարծիքով՝ կանայք գործածում էին տղամարդկանց բառապաշարից տարբերվող բառեր: Ավելին, կանանց առհասարակ արգելված էր անունով դիմել տղամարդկանց: Նրանք ավելի հակված էին մեղմասության և ոչ թե հայիոյախոսության և ավելի պահպանողական էին լեզվակիրառության հարցում: Օ. Յեսպերսենը ուշադրություն է դարձրել նաև տղամարդկանց ու կանանց խոսքային վարքերի միջև տարբերություններին երկլեզվության պայմաններում: Երկլեզվության դեպքում կանայք մնում են միալեզու, իսկ տղամարդիկ արագ յուրացնում են նոր լեզուն (Jespersen, 1998, 225-241): Գիտնականը բնութագրել է տղամարդկանց և կանանց արտասանության տարբերություններն ու յուրահատկությունները անգլերենի և ֆրանսերենի ձևաբանության մեջ, բառապաշարում, շարահյուսական կառույցներում: Թեև Օ. Յեսպերսենը իր ժամանակաշրջանի առումով հնարավորինս լիարժեք մեկնաբանել է գենդերային գործոնի ազդեցությունը խոսքային վարքի վրա, այնուամենայնիվ, նրա տեսակետները հետագա-

յում կասկածի տակ առնվեցին այն պատճառաբանությամբ, որ նրա եզրահանգումները հիմնվում են սոսկ սեփական սուբյեկտիվ դիտարկումների վրա (տե՛ս Janssen-Jurreit, 1982; Gunthner, Kottthoff, 1992 և այլն):

Եվ այսպես՝ առաջին հիմնարար լեզվաբանական հետազոտությունները գենդերաբանության մեջ նախաձեռնվեցին XX դարի 60-ական թվականներին՝ հանրալեզվաբանության զարգացմանը զուգընթաց, և ուշադրության արժանացան հանրամշակութային գործոնները, որոնք ազդում են խոսքի ու լեզվի ձևավորման վրա: Դրանց շարքում հատկապես առանձնացվեցին խոսողի ու խոսակցի այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են՝ տարիքը, սեռը, սոցիալական կարգավիճակը: Մանրակրկիտ հետազոտություն կատարեց Վ. Լաբովը, որը վերլուծեց «-ing» վերջավորության հնչյունաբանական հինգ տարբերակների տեղաբաշխվածությունը Նյու Յորքի տղամարդկանց ու կանանց շրջանում: Նա հետազոտեց հասարակական կարգավիճակի, ազգության, սեռի, տարիքի և իրադրության գործոնների ազդեցությունը: Սա չափազանց կարևոր հետազոտություն էր, քանի որ հարցվողները միջին խավի ներկայացուցիչներ էին, սովորական քաղաքաբնակներ, որոնք ընտրված էին ըստ սեռի, տարիքի, սոցիալական կարգավիճակի: Յուրաքանչյուր հարցվողի խոսքը վերլուծվում էր տարբեր հանգամանքներում՝ պաշտոնական և ոչ պաշտոնական, ընդ որում՝ հաշվի առնելով միաժամանակ մի քանի գործոն՝ լեզվական, սոցիալական և իրավիճակային: Այս հետազոտությունը գիտական ճանաչում բերեց այն ենթադրությանը, որ սեռը խոսքի վրա ազդող կարևորագույն գործոնն է (Labov, 2006):

Վ. Լաբովի հետազոտության կենտրոնում հնչակարգային հայեցակերպն էր, որի շրջանակներում հաստատվեց, որ կա-

նայք նախընտրում են գործածել արտասանության ավելի ընդունված ձևեր, որ տղամարդկանց և կանանց արտասանության տարբերությունների դրսևորման հաճախականությունը անգլերենում զգալիորեն նվազել է նրանց սոցիալական կարգավիճակի և կրթամակարդակի բարձրացմանը զուգահեռ (Labov, 1971, 188): Համանման արդյունքներ ստացվեցին նաև եվրոպական մի շարք այլ լեզուների նյութի վրա հաղորդակցական գենդերային հայեցակերպի հետազոտության ընթացքում (տե՛ս Günthner, Kottthoff, 1991): Բացի դրանից՝ Վ. Լաբովը ապացուցեց, որ ցանկացած խոսող լեզուն օգտագործում է փոփոխական ձևով և չի արտասանում բառի միևնույն հնչակարգային տարբերակը դրա կիրառման բոլոր դեպքերում (Labov, 1971): Այս եզրակացությունը կարևոր գիտական նշանակություն ունեցավ, քանի որ «գենդերային հիմնախնդրին նվիրված ավելի վաղ շրջանի աշխատությունները, որպես կանոն, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պարունակում էին տղամարդկանց և կանանց խոսակցական տարբերությունների ներակա բնույթի մասին հետևություն՝ որպես կենսաբանորեն պայմանավորված գործոնի» (Кирилина, 1999, 15):

1970-ականներին, պայմանավորված ֆեմինիստական շարժումով, հետաքրքրության նոր ալիք բարձրացավ կանանց խոսքի նկատմամբ: Մի շարք գիտնականներ պնդում էին, որ կանանց կողմից որոշակի «իգական» ձևերի գործածությունը հասարակության մեջ իրավահավասար դիրքի հասնելու նրանց փորձերի վրա բացասաբար է ազդում: Նման տեսակետ հաճախակի է հանդիպում նաև հետազայում՝ մասնավորապես Ռ. Լակոֆի աշխատություններում, որոնցում գլխավորապես քննության են առնվում լեզվում կնոջ սոցիալական կարգավիճակի արտացոլմանը վերաբերող ընդհանուր հարցեր (Lakoff,

1987): Ըստ Ռ. Լակոֆի՝ եվրոպական լեզուներում կինը, որպես կանոն, ներկայացվում է բացասական լույսի ներքո (բանահյուսությունը դրա լավագույն ապացույցն է): Այստեղ կինը ավելի հաճախ օբյեկտ է, քան սուբյեկտ: Նրա խոսքային վարքն ավելի անվստահ է, քան տղամարդունը, բայց և միաժամանակ մարդասիրական է, պակաս ագրեսիվ (Lakoff, 1973, 65): Հեղինակի կարծիքով՝ այդ ամենը լայն առումով եվրոպական հասարակության մեջ կայունացած կանացիության կարծրատիպի հետևանքն է, որն ընկալվում է որպես մեղմություն, զիջողականություն, հնազանդություն: Եվ հակառակը՝ տղամարդկանց ոճով խոսող և գրող կանանց, այսինքն՝ իրենց հուզող թեման քննարկելու վճռականություն ունեցողներին, որոնք բանավոր խոսքում կարող են նաև ընդհատել զրուցակցին, օգտագործել հրամայական ձևեր, Ռ. Լակոֆն ընկալում է որպես անկիրթ և տղամարդակերպ: Այդ իրավիճակը նա անվանում է կին լեզվակիրների «երկակի կախվածության» վիճակ (Lakoff, 1973, 52):

Հարկ է նշել, որ Ռ. Լակոֆի հետազոտությունը բազմաթիվ վեճերի առիթ դարձավ: Հեղինակին քննադատում էին այն բանի համար, որ նա իր վերլուծությունը հիմնում է սեփական ներըմբռնողության վրա և կնոջ խոսքի պատճառները փնտրում բացառապես սոցիալական գործոնների մեջ: Տղամարդու խոսքն ընդունվում էր որպես նորմ: Անընդունելի էին համարում այն հանգամանքը, որ Ռ. Լակոֆի ուսումնասիրությունը հետազոտողների ուշադրությունը շեղում էր ինչպես լեզվի ավելի համակարգված ու համալիր քննությունից, այնպես էլ մասնավորապես տղամարդկանց խոսքի կարևորումից: Այդուհանդերձ Ռ. Լակոֆի աշխատությունները կնոջ խոսքի ֆենոմենի շատ հետազոտությունների համար էական դեր կատարեցին:

Ընդհանուր առմամբ, լեզվում գենդերային գործոնի հետազոտման սկզբնական փուլում հետազոտությունների հատվածական բնույթը, լեզվաբանության մեջ ոչ կենտրոնական դիրքեր զբաղեցնելը, տղամարդու և կնոջ լեզուների հարաբերակցության դիտարկումը որպես նորմ և նորմից շեղում, այնուամենայնիվ, չխոչնդոտեցին գենդերային հետազոտությունների հետագա զարգացմանը: Թեման սկսեց ընդլայնվել և գրավել լեզվաբանների ավելի մեծ ուշադրությունը նոր տվյալների ի հայտ գալու շնորհիվ, որով պայմանավորվեց մասնագիտական հետաքրքրության աճը գենդերային հետազոտությունների նկատմամբ:

Ժամանակի ընթացքում ձևավորվեց այն հարցադրումը, թե արդյոք կարելի՞ է բոլոր լեզուներում գործող որևէ համընդհանուր սկզբունք բացահայտել, որը հիմք կտա խոսակցական լեզուն բաժանելու տղամարդկանց և կանանց տարբերակների, թե՞ սեռի գործոնի ազդեցությունը խոսքի վրա հիմնվում է տվյալ ժողովրդի մշակույթի և հասարակության առանձնահատուկ բնութագրերի վրա: Ուրիշ խոսքով՝ գիտնականները «խոսողի սեռ/խոսակցի սեռ-լեզվագործածության առանձնահատկություններ» հարաբերակցությունը ճիշտ հասկանալու և որակելու համար սկսեցին համակողմանիություն որոնել՝ փորձելով պարզել, թե արդյո՞ք բոլոր լեզուներում քերականության միևնույն ոլորտներում օգտագործվում են խոսողի և խոսակցի սեռային տարբերություններով պայմանավորված ձևերը, թե՞ գոյություն ունեն օգտագործման հատուկ կանոններ՝ կախված տվյալ լեզվից: Դա պարզելու համար անհրաժեշտ էին տվյալներ տարբեր լեզուներից: Հետազոտությունների համեմատաբար անհետևողական և անկանոն բնույթը, լեզվաբանական հետազոտություններում առաջնահերթությունների մշտափոփո-

խությունը հանգեցրին այն բանին, որ համակողմանիության մասին հարցը առ այսօր բաց է: Այդուհանդերձ, հարցադրումն ինքնին խթանեց որոնումների ակտիվությունը և մեծաքանակ տվյալների կուտակումը, որոնք հետագայում կիրառվեցին նաև այլ լեզուներում:

Ուսումնական լեզվաբանության մեջ նույնպես գենդերային հետազոտությունների սկիզբը սովորաբար թվագրվում է XX դարի իննսունական թվականների կեսերից: Հենց այդ շրջանում էր, որ ռուսական գիտական գրականության մեջ հայտնվեց **«գենդեր»** եզրույթը: Ու թեև այդ շրջանում հետազոտությունները համակարգված չէին և չէին հավակնում գիտական ուղղության կարգավիճակի, կապված չէին հանրային կառուցվածքաբանության տեսության հետ, ռուս գիտնականները որոշակի ներդրում ունեցան գենդերային հետազոտությունների հիմնախնդիրը մշակելու հարցում (տե՛ս Кирилина, 2000; Халева, 2001 և այլն):

Լեզվաբանական գենդերաբանության յուրահատկությունը ռուսական գիտական գրականության մեջ տղամարդու և կնոջ խոսքի հետազոտությունների գործնական ուղղվածությունն է (տե՛ս Жельвис, 1989; Крейдлин, 2005; Потапов, 1997; Романов, Витлинская, 2000 և այլն): Մեծ թվով աշխատություններ կապված են քրեագիտական փորձաքննության պահանջների հետ (տե՛ս Гомон, 1990; Потапова, 2001): Դրանք կենտրոնացած են տղամարդու և կնոջ խոսքի նույնականացման հատկանիշները հայտնաբերելու և պարզաբանելու վրա: Նմանաբնույթ հետազոտությունների համար առավել կարևոր է հակառակ սեռի անձի խոսքի կեղծակերպումը պարզաբանելու մեթոդիկաների մշակումը: Ակներև է, որ այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ունենալ տղամարդու և կնոջ խոսքի հստակ ստու-

գելի հատկանիշներ: Այսպես՝ ըստ Տ. Վ. Գոմոնի՝ «հակառակ սեռի անձի խոսքի կեղծակերպման փաստի մասին եզրակացության հանգելու համար պետք է պարզել, թե տղամարդու և կնոջ խոսքի սեռային դասակարգման հատկանիշների ո՞ր համալիրն է աչքի զարնող, հաճախադեպ և դյուրին նմանակվող, իսկ որ հատկանիշներն են դժվար ընդօրինակելի, որը պայմանավորված է խոսքի ծագման խորքային գործընթացներով և չի կարող քողարկվել» (Гомон, 1990, 150):

Լեզվական անհատի խոսքի ձևավորման վրա գենդերային յուրահատկությունների ազդեցության հետազոտության ոլորտում առանձնացվում է երեք հիմնական մոտեցում: Ընդ որում, եթե առաջին մոտեցումը հանգում է կնոջ և տղամարդու լեզվի՝ բացառապես սոցիալական բնույթով պայմանավորված բացատրությանը և նպատակաուղղված է վեր հանելու խոսքային տարրերի՝ սոցիալ-հասարակական դրոշմ կրող իմաստաբանական տարբերությունները, ապա հանրալեզվաբանական մոտեցումը կնոջ և տղամարդու լեզուն գիտականորեն հանգեցնում է նրանց խոսքային վարքի առանձնահատկություններին՝ նշելով նրանց միջին վիճակագրական ցուցանիշների կարևորությունը կնոջ և տղամարդու վարքի հոգելեզվաբանական ուսումնասիրություններում (տե՛ս Крючкова, 1975; Вейлерт, 1976 և այլն): Երրորդ մոտեցման ներկայացուցիչները սեռերի լեզվական վարքում առավելապես շեշտադրում են տարբերությունների ճանաչողական հայեցակերպը: Նրանց համար ավելի կարևոր է ոչ միայն տարբերությունների հաճախականությունը պարզելը, այլև լեզվական կարգերի ամբողջական լեզվաճանաչողական մոդելներ ստեղծելը (տե՛ս Adler, 1987; Колосова, 1996 և այլն):

Ա. Վ. Կիրիլինան առանձնացնում է լեզվաբանական վեց ուղղություն, որոնք հետազոտում են գենդերային գործոնի ազդեցությունը խոսքի վրա և «տարբերվում են հայեցակարգային ելակետերով, հետազոտության մեթոդով և ուսումնասիրվող նյութի բնույթով» (Кирилина, 1999, 25):

1. հանրալեզվաբանական գենդերային հետազոտություններ (Trudgill, 1983; Boxer, 1993; Black, Coward, 1998; Шлычкова, 2000 և այլն),
2. ֆեմինիստական լեզվաբանություն (Steeves, 1987; Code, 2000; Добровольский, 2000; Pauwels, 2003 և այլն),
3. բուն գենդերային հետազոտություններ, որոնք ուսումնասիրում են երկու սեռերի լեզվական վարքը (Clark, 1998; Горошко, 1996; Городникова, 1999 և այլն),
4. արականության հետազոտում (men's studies), որը XX դարի վերջին առաջացած ամենաերիտասարդ ուղղությունն է (Tolson, 1977; Spender, 1994 և այլն):
5. հոգելեզվաբանական հետազոտություններ (նեյրոլեզվաբանության բնագավառի աշխատությունները, խոսքի անհատական զարգացման (օնտոգենետիկ-անհատի զարգացումը բջջից մինչև հասունություն և մահ) հետազոտումը, տղամարդկանց և կանանց միջև տարբերությունների և ճանաչողական առանձնահատկությունների հետազոտություններ խոսքում (Горелов, Седов, 1997 և այլն),
6. միջմշակութային, լեզվամշակութաբանական հետազոտություններ՝ ներառյալ գենդերային ենթամշակույթների տեսությունը (Maltz, Borker, 1982 և այլն):

Արևմտյան հումանիտար գիտությունների մեջ գենդերային հետազոտություններում արմատական փոփոխությունների

առաջացումն ու զարգացումը պատահական չեն: Դրանք կապված են ճանաչողության հիմնախնդրի, գիտության փիլիսոփայության և հասարակության փիլիսոփայության վերաբերյալ նոր հայացքի հետ:

Իմաստաբանության, հանրալեզվաբանության բուռն զարգացումը ներկայումս հանգեցրել է, լայն առումով, գիտական հարացույցի փոփոխության՝ հետազոտողները ավելի ու ավելի են հեռանում կառուցվածքաբանական դիրքերից: Նրանց ուշադրության կենտրոնում լեզվի վրա «մարդկային գործոնի» ազդեցությունն է:

XX դարի 60-ական թթ. վերջին–70-ական թթ. սկզբին գենդերային հետազոտությունները լեզվում ևս մեկ հզոր խթան ստացան, երբ ԱՄՆ-ում և Գերմանիայում այսպես կոչված «Կանանց նոր շարժման» շնորհիվ լեզվագիտության մեջ ծնունդ առավ ինքնատիպ մի ուղղություն, որը կոչվեց ֆեմինիստական լեզվաբանություն: Ֆեմինիստական լեզվաբանության գլխավոր նպատակը հայրիշխանության՝ հասարակական և մշակութային կյանքում տղամարդկանց գերիշխանության շեշտադրումն էր (Borneman, 1991):

Գերմանուհի հետազոտող Տրեմել-Պլետցը ստեղծեց «դեֆիցիտության տեսությունը», որն ընդգծում էր վստահության, առաջատարության, նվաճողականության և «տղամարդկային» այլ հատկությունների պակասը կանանց բանավոր և գրավոր խոսքում (Trömel-Plötz, 1978): 1990-ական թթ. այս հայեցակարգը (և բուն «դեֆիցիտության տեսությունը») վիճարկեցին Յու. Սամելը և Բ. Բարոնը, որոնք պնդում էին, որ իրականում խնդիրը ոչ թե կանանց խոսքում դեֆիցիտության մասին է, այլ տղամարդկանց և կանանց խոսքային վարքում առկա տարբերությունների և դրանց առանձնահատուկ գծերի, որոնք թույլ չեն

տալիս մեկի փորձառությունը հավասարեցնել մյուսին (Samel, 1995; Baron, 1996):

80-ական թթ. վերջերից արականության խնդիրների նկատմամբ հետաքրքրությունն էականորեն աճեց: Հեղինակների հետազոտական ուշադրության կենտրոնում հայտնվեցին արականության տարբեր տեսակների սահմանազատման, առաջնային արականության (*hegemonic masculinity*) կարծրատիպի առանձնացման խնդիրները (Connel, 1993):

Հետագայում գենդերային լեզվաբանության մեջ էլ ավելի շեշտադրվեցին տղամարդկանց և կանանց լեզվական վարքի տարբերությունները և դրանց արժևորմանը առնչվող հարցերը (տե՛ս Postl, 1991): Ժամանակակից գերմանացի հետազոտողները փորձում են ցույց տալ տղամարդկանց և կանանց լեզվական աշխարհների և հաղորդակցային տարբերությունները: Հետազոտողները հարցադրումներ են անում այն մասին, թե ինչ տարբերություններ են տեսնում կանայք տղամարդկանց հաղորդակցության մեջ, և թե տղամարդիկ ինչպես են գնահատում կանանց խոսքը: Կ. Օպերմանը և Ե. Վեբերը, խոսելով հաղորդակցական տարբերությունների մասին, ելնում են նրանից, որ «հաղորդակցվելիս ի սկզբանե կանայք և տղամարդիկ տարբեր նպատակներ են հետապնդում» (Oppermann, Weber, 1995, 52): Տղամարդկանց խոսքը առավելապես տեղեկատվական է, կանայք շփվելիս շեշտը դնում են մարդկային կապերի, մտերմության վրա: Խոսելիս կանայք կարիք ունեն իրենց անձնական հատկությունների հաստատման և հարաբերությունների «անվտանգության», իսկ տղամարդիկ, որպես կանոն, դրա կարիքը չունեն: Հեղինակները համոզված են, որ կանանց շփման նպատակը համաձայնության հասնելն է և տարբերու-

թյունները նվազեցնելը, մինչդեռ տղամարդիկ խոսելիս նախընտրում են «անկախությունը» (Oppermann, Weber, 1995, 58):

Ա. Լինկեն տղամարդկանց և կանանց հաղորդակցության տարբերությունները վերլուծում է այլ դիտանկյունից: Առաջին հերթին դա բառապաշարի ընտրությունն է: Ա. Լինկեի կարծիքով՝ կանայք խուսափում են ուժի դրսևորումից և ընտրում են ավելի թույլ ձևեր: Դրա հիմնական պատճառը տղամարդկանց և կանանց կենսափորձի տարբեր բնագավառներն են և տարբեր մասնագիտական բառապաշարը: Այնուհետև վերլուծվում են ծայնը, առոգանությունը, հնչերանգը, առանձին քննարկվում են վարքի փոխզիջումային-կոնֆլիկտային կողմնորոշումները, մասնավորապես՝ փոխզիջումային համագործակցային և ղեկավարող ձևերը կանանց շրջանում և կոնֆլիկտային կողմնորոշմամբ շփման ձևը տղամարդկանց շրջանում (Linke, Nussbaumer, Portmann, 1994):

Մարդու ձևավորման մեջ կարևորելով բազմաթիվ գործոնների ազդեցությունը (էթնիկ, ցեղային պատկանելության, կրոնի, տարիքի, սեռի, մասնագիտության և այլն)՝ Դ. Տաննենը համոզված է, որ դրանք, միախառնվելով յուրաքանչյուր անհատի անհատականության և նախասիրությունների հետ, անպայմանորեն դրսևորվում են նրա խոսքում: Խոսակցական ոճերում առկա սեռային պատկանելությամբ պայմանավորված յուրահատկությունները, ըստ նրա, լուրջ հետազոտություն են պահանջում (Tannen, 1992): Դ. Տաննենի տվյալները ևս մեկ անգամ հաստատում են Կ. Օպերմանի, Ե. Վեբերի, Ա. Լինկեի պնդումները կանանց և տղամարդկանց հաղորդակցության նպատակների տարբերությունների վերաբերյալ:

Այսօրինակ աշխատությունների շարքին են դասվում նաև միջմշակութային և լեզվամշակութաբանական հետազոտու-

թյունները, սակայն այս բնագավառներում գենդերի հիմնախնդիրը դեռևս բավարար մշակվածության չի հասել: Այդուհանդերձ, արդեն իսկ հետազոտված նյութի հիման վրա կարելի է արձանագրել, որ լեզվի անվանական համակարգը *արականություն* և *իգականություն* հասկացությունները միանման չի սահմանում և նույնանման նշանակություն չի տալիս դրանց: Տղամարդկանց և կանանց խոսքային վարքը կարող է տարբերվել՝ պայմանավորված համապատասխան մշակույթի նորմերով: Ինչպես ենթադրում է Ա. Վ. Կիրիլինան, «գուգադրական լեզվամշակութաբանության համար կարևորագույնը մշակութային հասկացությունների համադրումն է և դրանց մեկնաբանումը» (Кирилина, 1999, 25): Այս մոտեցման շրջանակներում ձևավորվում է աշխարհի պատկերի պարզագույն բնութագիրը, որում ներկայացված են մշակույթների ու լեզուների փոխգործակցությունն ու փոխներթափանցումը:

Արտասահմանյան լեզվաբանության որոշ հետազոտողներ շեշտը դնում են ճանաչողական մոտեցման վրա, քանի որ գենդերային հետազոտությունների կարևոր հայեցակերպերից է նաև խոսողների լեզվական գիտակցության ոլորտը՝ դինամիկ և համալիր միջավայրը, որը գոյություն ունի զանազան խոսքային կառույցների տեսքով և ճանաչողական, հուզական ու լեզվական գործընթացների միասնություն է:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է *գենդերը*: *Գենդեր* և *սեռ* հասկացությունների տարբերությունը (ընդհանուր պատկերացումներ), պատմական ակնարկ:

2. Ի՞նչ նախադրյալներ կային գենդերային տեսության առաջացման համար:

3. Ինչու՞ է գենդերը համարվում սոցիալ-մշակութային հարացույց:

4. Նշե՞ք գիտական տարբեր դպրոցների ներկայացուցիչների կատարած գենդերային ուսումնասիրությունների զանազան տեսակետները:

5. Որո՞նք են գենդերային տեսության հիմնական հասկացությունները և ըմբռնումները:

6. Լեզվական անհատի խոսքի ձևավորման վրա գենդերային յուրահատկությունների ազդեցության հետազոտության ոլորտում առանձնացվում է երեք հիմնական մոտեցում: Որո՞նք են դրանք:

7. Ի՞նչ է «դեֆիցիտության տեսությունը»՝ ըստ հետազոտող Տրեմել-Պլետցի:

8. Ըստ Ա. Վ. Կիրիլինայի՝ ո՞ր լեզվաբանական ուղղություններն են հետազոտում գենդերային գործոնի ազդեցությունը խոսքի վրա:

9. Ի՞նչ մոտեցումներ են գլխավորապես քննության առնվում Ռ. Լակոֆի աշխատություններում:

10. Ի՞նչ տարբերություններ են տեսնում կանայք տղամարդկանց հաղորդակցության մեջ:

11. Լուսաբանել տղամարդկանց և կանանց խոսքի տարբերությունները:

12. Պարզաբանել տղամարդկանց ու կանանց աշխարհայացքի և արժեքների տարբերությունների ազդեցությունը հաղորդակցման վրա:

Քննարկման թեմաներ

1. Փիլիսոփայության, քաղաքագիտության, լեզվագիտության, մշակութաբանության, սոցիոլոգիայի, հոգեբանության և այլ մասնագիտությունների մեջ գենդերային բաղադրիչի ինտեգրման կարևորությունը:

2. Գենդերային փոխհարաբերությունները՝ որպես հասարակության արժեքային համակարգը պայմանավորող գործոն:

3. Արականություն և իգականություն. կարելի՞ է արդյոք միանշանակ բնութագրել:

4. Ի՞նչ կպատասխանեիք Զ. Ֆրոյդի «Անստիպան ճակատագիր է» արտահայտությանը:

5. Վերլուծել հետևյալ արտահայտությունը՝ «Կանացիությունը հարկ է համարել բնության թերություն... Առաջինն իր բնույթով բարձր է, երկրորդը՝ ցածր. և ահա առաջինը իշխում է, երկրորդը՝ հպատակվում» (Արիստոտել, Ք.ա. 384-322 թթ.):

Գործնական առաջադրանքներ

1. Արևմտյան մի շարք երկրներում կնոջ իրավունքի հիմնահարցի ընդունումը ստացավ կանանց շարժում (ֆեմինիզմ) անվանումը, որը ունեցավ զարգացման մի քանի փուլ: Ներկայացրեք կանանց շարժման հիմնական փուլերը: Ցույց տվեք փուլերից յուրաքանչյուրում կանանց դերի փոփոխման միտումները:

2. Համառոտ բնութագրեք կանանց/տղամարդկանց խոսքային շփման առանձնահատկությունը՝ Դ. Տաննենի առաջարկած հիմնական չափանիշներով (տե՛ս Tannen, 1992):

3. Կանանց խոսքին նվիրված աշխատանքների քանակը զգալիորեն գերակշռում է տղամարդկանց խոսքին նվիրված հետազոտություններին: Ռ. Լակոֆի ուսումնասիրություններից հետո բազմաթիվ գիտական աշխատություններ նվիրվեցին կանանց խոսքի վերլուծությանը՝ իրականացվելով երեք հիմնական ոլորտներում.

- վերլուծություն այն մասին, թե ինչպես է անվանվում կինը, և ինչպես է նրա նկատմամբ վերաբերմունքն արտահայտվում այս կամ այն լեզվում (Tiger, Shepherd, 1975; Hunter, 1976; Rogers, 1985; Philips, 2003),
- վերլուծություն այն մասին, թե ինչպես են կանայք խոսում (James, Clark, 1993; Cameron, 1998),
- վերլուծություն այն մասին, թե ինչպիսի հաղորդակցական մարտավարություն են օգտագործում կանայք շփումների ժամանակ (Hymes, Gumperz, 1972; Lapadat, Seesahai, 1977; Herbert, 1990):

Ներկայացրեք վերը նշված գենդերային հետազոտությունների տեսությունները և մեթոդաբանությունները:

Գրականություն

1. **Вейлерт А.А.**, О зависимости количественных показателей языка от пола говорящего лица // Вопросы языкознания, 1976. №5. С.138-143.

2. **Винокур Т.Г.**, Говорящий и слушающий: Варианты речевого поведения. М.: Наука, 1993.

3. **Гумбольдт В. фон.**, Избранные труды по языкознанию (пер. с нем.) М.: Прогресс, 1984.

4. **Горелов И. Н., Седов К.Ф.**, Основы психолингвистики. М.: Лабиринт, 1997.

5. **Горошко Е.И.**, Особенности мужского и женского речевого поведения (психолингвистический анализ). Автореф. дис. ...канд. филол. наук. М., 1996.

6. **Городникова М.В.**, Гендерный фактор и распределение социальных ролей в современном обществе (на материале брачных объявлений) // Гендерный фактор в языке и коммуникации: Сб. науч. трудов. Вып 446. М.: МГЛУ, 1999. С. 36 - 44.

7. **Гомон Т.В.**, Исследование документов с деформированной внутренней структурой. Дисс. ... кандидата юридических наук. М., 1990.

8. **Добровольский Д.О.**, Феминистская идеология в гендерных исследованиях и критерии научности / Д.О. Добровольский, А.В. Кирилина // Гендер как интрига познания. М.: Рудомино, 2000. с. 19-35.

9. **Жельвис В.И.**, Инвектива: мужское и женское предпочтения // Этнические и культурные стереотипы социального поведения. Л., 1989. с. 266-283.

10. **Картушина Е.А.**, Гендерные аспекты фразеологии в массовой коммуникации. Автореферат дисс. канд. фил. н. Ижевск, 2003.

11. **Кирилина А. В.**, Женский голос в русской паремиологии // Женщина в российском обществе, 1997. №3, с. 23-26.

12. **Кирилина А.В.**, Гендер: Лингвистические аспекты. М.: Изд-во Институт социологии РАН, 1999.

13. **Кирилина А.В.**, Гендерные аспекты массовой коммуникации // Гендер как интрига познания: Сборник статей / Сост. А.В. Кирилина. М., 2000. С. 47-80.

14. **Клецин А.А.**, Предисловие редактора // Гендерные тетради. Выпуск 1. СПб, 1997, с. 5-11.

15. **Крейдли Г.Е.**, Мужчины и женщины в невербальной коммуникации. М.: Языки славянской культуры, 2005.

16. **Колосова О.Н.**, Когнитивные основания языковых категорий (на материале современного английского языка): Дисс. ... д-ра филол. наук. М., 1996.

17. **Крючкова Т.В.**, Некоторые экспериментальные исследования особенностей использования русского языка мужчиной и женщиной// Проблемы психолингвистики. М., 1975. С.186-200.
18. **Ласкова М.В.**, Грамматическая категория рода в аспекте гендерной лингвистики. Дис. ... канд. филол.наук. Ростов-на-Дону, 2001.
19. **Мечковская Н.Б.**, Социальная лингвистика. М.: Аспект. Пресс, 2000.
20. **Потапов В.В.**, Язык женщин и мужчин: фонетическая дифференциация// ИАН СЛЯ, 1997. Т.56. №3. С. 52 – 62.
21. **Потапова Р.К.**, Сексолект как объект исследования в криминологии // Гендер: Язык, Культура, Коммуникация: Докл. Первой международной конф., Москва 25–26 ноября 1999г. М., 2001. С. 302 – 313.
22. **Пиз А.**, Язык взаимоотношений мужчина – женщина. М.: Изд-во ЭКСМО – ПРЕСС, изд-во ЭКСМО – МАРКЕТ, 2000.
23. **Романов А.А., Витлинская Т.Д.**, Особенности мужского и женского употребления и выражения настаивания // Андрогинность дискурса: Материалы рабочего совещания/ Под ред. В.Н.Базылева и Ю.А. Сорокина. М: МАКС-Пресс, 2000. С. 22-26.
24. **Рябов О.В.**, Гендерные аспекты межкультурной коммуникации: социально-философский анализ// Гендер как интрига познания: Альманах. М.: Рудомино, 2002. С.37– 47.
25. **Трофимова Е.И.**, Терминологические вопросы в гендерных исследованиях // Гендер: Язык. Культура. Коммуникация: Докл. Второй международной конф., Москва 22 – 23 ноября 2001г. М., 2002.
26. **Халеева И.И.**, Гендер в теории и практике обучения межкультурной коммуникации // Доклады Первой Международной конференции. “Гендер: язык, культура, коммуникация”. М., 2001. С. 7-11.
27. **Шлычкова О.Н.**, Социокультурный анализ гендерной картины мира. Автореф. дисс.... ... канд. философ. наук. Ростов-на-Дону, 2000.

28. **Шахмайкин А.М.**, Проблема лингвистического статуса категории рода // Актуальные проблемы современной русистики. Диакрония и синхрония. М.: МГУ, 1996. С. 226-273.

29. **Юнг К.Г.**, Душа и миф: шесть архетипов. Киев: Государственная библиотека литературы для юношества, 1996.

30. **Adler M.K.**, Sex Differences in Human Speech. A Sociolinguistic Study, Hamburg, 1987.

31. **Borneman E.**, Das Patriarchat. Ursprung und Zukunft unseres Gesellschaftssystems. Frankfurt a. Main, 1991.

32. **Baron B.**, Die Inszenierung des Geschlechterverhältnisses im akademischen Streitgespräch. Zur Kontextabhängigkeit der Dissensformatierung // Jahrbuch Arbeit. Bildung. Kultur, 1996. Bd.14. S. 69-80.

33. **Boxer D.**, Social Distance and Speech Behavior: The Case of Indirect Complaints // Journal of Pragmatics. USA: Springer, 1993. № 19.

34. **Black M., Coward R.**, "Linguistic, Social and Sexual Relations: A Review of Dale Spender's Man Made Language", in D. Cameron (ed.) The Feminist Critique of Language: A Reader. London and New York: Routledge, 1998 p. 100-119.

35. **Cameron D.**, Gender, Language and Discourse: A Review Essay // Signs: Journal of Women in Culture and Society. London, 1998. Vol. 23. № 4. p. 945 – 971.

36. **Connell R. W.**, The big picture: Masculinities in recent world history// Theorie & Society 22, 1993. p.597-623.

37. **Code L.** Encyclopedia of Feminist Theories. London: Routledge, 2000.

38. **Clark K.**, The Linguistics of Blame: Representations of Women in the Sun's reporting of Crime and Sexual Violence // The Feminist Critique of Language: A Reader / Cameron D. London, New York: Routledge, 1998. p. 183 – 197.

39. **Eagly A. H.**, Sex Differences In Social Behavior// A social-role interpretation. New York: Hellbaum, 1987.

40. **Eckes T.**, Features of Men. Features of Women: Assessing Stereotypic Beliefs About Gender Subtypes // British Journal of Social Psychology. London, 1994, № 33, p.107-123.
41. **Fishman P.**, Interaction: The Work Women Do // Social Problems. New York, 1978, № 24. p.397 – 406.
42. **Giddens A.**, Sociology. Cambridge: Polity Press, 2001.
43. **Gumperz J.**, Language and Social Identity. Cambridge: Cambridge University Press, 1982.
44. **Günthner S., Kotthoff H.**, Die Geschlechter im Gespräch: Kommunikation in Institutionen. Stuttgart, 1992.
45. **Günthner S., Kotthoff H.**, Von fremden Stimmen. Weibliches und männliches Sprechen im Kulturvergleich. in: Susanne Günthner and Helga Kotthoff (Hrsg.): Von fremden Stimmen: Weibliches und männliches Sprechen im Kulturvergleich. Frankfurt am Main: Suhrkamp. 1991.
46. **Hymes D., Gumperz J.**, Models of the Interaction of Language and Social Life // Directions in Sociolinguistics: The Ethnography of Communication. New York: Holt, Rinehart and Winston, 1972. p. 35 – 71.
47. **Herbert R. K.**, Sex-based Differences in Compliment Behavior // Journal of Pragmatics. №14 . 1990. № 2. p. 193 – 218.
48. **Hunter J. E.**, Images of Women // Journal of Social Issues, 1976. № 32. p.7-17.
49. **James D., Clark S.**, Women, Men and Interruptions // Gender and Conversational Interaction / Tannen D. New York: Oxford University Press, 1993. p. 231–280.
50. **Jespersen O.**, The Woman // The Feminist Critique of Language: A Reader Routledge: London, New York, 1998. p. 225 – 241.
51. **Janssen-Jurreit M.**, Sexism: the Male Monopoly of History and Thought. London: Pluto Press, 1982.
52. **Jones D.**, Gossip: Notes on women's oral culture // The Voices and Words of Women and Men / Kramerae Ch. Oxford: Pergamon Press, 1980. p.193 – 198.

53. **Kohlberg L.**, The Development of Modes of Thinking and Choices in Years 10 to 16. Ph. D. Dissertation, University of Chicago. 1958.

54. **Labov W.**, Variation in Language // The Learning of Language. National Council of Teachers of English / Carrol E. Reed. New York, 1971. p. 187-221.

55. **Labov W.**, The Social Stratification of English In New York City. Cambridge University Press, 2006.

56. **Lakoff G.**, Women, Fire and Dangerous Things. Chicago: The University of Chicago Press, 1987.

57. **Lakoff R.**, Language and Women's Place // Language in Society. Cambridge: Cambridge University Press, 1973. N 2. p. 45-79.

58. **Lapadat J., Seesahai M.**, Male Versus Female Codes In Informal Contexts // Sociolinguistics Newsletter. Indiana University, 1977. № 8. p. 7-8.

59. **Linke A., Nussbaumer M., Portmann P. R.**, Studienbuch Linguistik. 2 Aufl., Tübingen, Niemeyer, 1994.

60. **Maltz D. Borker R.**, A Cultural Approach to Male-Female Miscommunication // Language and Social Identity. Cambridge, Cambridge University Press, 1982. p. 195-216.

61. **Mauthner Fritz**, Beiträge zu einer Kritik der Sprache. Band 1 (Zur Sprache und Psychologie), 3. Auflage, Stuttgart und Berlin, 1921 (zuerst 1913).

62. **Macaulay R.**, The Myth Of Female Superiority In Language // Journal of Child Language, Cambridge: Cambridge University Press, 1978. № 5. p. 353-363.

63. **Mills S.**, Negotiating discourses of femininity // Journal of Gender Studies. London: Routledge, 1992. 1(3) May. p. 271-285.

64. **Oakley A.** Sex, Gender and Society, London: Temple Smith, 1972.

65. **O'Barr W., Atkins B.**, "Women's Language" or "Powerless Language"? // Women and Language in Literature and Society / McConnel-Ginet S. et al. New York: Praeger, 1980. p.93-110.

66. **Oppermann K., Weber E.**, Frauensprache - Mönnersprache. Die verschiedene Kommunikationsstil von Männern und Frauen. Zürich, Orell Füssli Verl., 1995.
67. **Pauwels A.**, Linguistic Sexism and Feminist Linguistic. In J. Holmes, and M. Meyerhoff. (Eds.), The Handbook of Language and Gender. Oxford: Basil Blackwel, 2003.
68. **Postl G.**, Weibliches Sprechen: Feministische Entwürfe zu Sprache und Geschlecht / Gertrude Postl, Wien, Passagen Verlag, 1991.
69. **Philips S. U.**, The Power Of Gender Ideologies In Discourse // A Handbook of Language and Gender / Holmes J., Meyerhoff M. Blackwell Publishing, 2003. p.252-277.
70. **Rogers S. C.**, Gender In Southwestern France: The Myth of Male Dominance Revisited// Anthropology and Aesthetics. USA: Harvard University Press 1985. № 9, p.65-86.
71. **Sapir E.**, Abnormal Types of Speech In Nootka // Canada. Geological Survey. Memoir 62. Antropological Series. № 5. Ottawa: Government Printing Bureau, 1915. p.97-115.
72. **Samel I.**, Einführung In Die Feministische Sprachwissenschaft. Berlin, 1995.
73. **Steeves H. L.**, Feminist Theories and Media Studies// Critical Studies In Mass Communication.USA, 1987. S. 95-135.
74. **Spender D.** ,Man Made Language - 2nd edition. London: Pandora, 1994.
75. **Tannen D.**, You Just Don't Understand: Women and Men in Conversation Great Britain:Clays Ltd, 1992.
76. **Tiger L., Shepherd J.**, Women In the Kibbutz. New York: Harcourt Brace Jovanovich, 1975.
77. **Trömel-Plötz S.**, Linguistik und Frauensprache // Linguistische Berichte, 1978. №57.S. 49-68
78. **Tolson A.**, The Limits Of Masculinity. London, 1977.
79. **Turner J. H.**, A Theory of Social Interaction. California: Stanford University Press, 1988.
80. **Trudgill P.**, Sociolinguistics: An Introduction to Language and Society. Harmondsworth: Penguin Books, 1983.

1.3. Լեզուն և գենդերային կարծրատիպերը

Կարծրատիպ երևույթը դիտարկվում է ոչ միայն հոգեբանների, այլև լեզվաբանների, սոցիոլոգների, ազգագրագետների, էթնոհոգելեզվաբանների գործերում (Бартминский, 1995; Матевосян, 2007; Прохоров, 2003): Վերոնշյալ գիտություններից յուրաքանչյուրի ներկայացուցիչները առանձնացնում են կարծրատիպի այն հատկանիշները, որոնք էական են իրենց հետազոտական ոլորտի դիտանկյունից՝ վեր հանելով սոցիալական, էթնոմշակութային, գենդերային և այլ կարծրատիպեր:

Կարծրատիպերի հետազոտության ընթացքում ծագող գլխավոր խնդիրներից է այն, թե դրանք որքանով են օբյեկտիվորեն արտացոլում իրականությունը: Այս հարցում միասնական կարծիք չկա: Եթե կարծրատիպի հիմքում ընկած է իրականությունը, ապա այն պետք է լինի հարաբերականորեն կայուն, իսկ եթե ամբողջությամբ կեղծ է, ապա պետք է փոփոխվի՝ կախված այս կամ այն իրավիճակից:

Կարծրատիպ եզրույթն առաջին անգամ ներմուծվել է հասարակական գիտություններ XX դարի 20-ական թվականներին ԱՄՆ-ում, երբ զանգվածային գիտակցության գործառության օրենքները հետազոտելու և բացատրելու անհրաժեշտություն ծագեց: Ամերիկացի լրագրող և քաղաքագետ Ուոլթեր Լիպմանը 1922 թ. լույս տեսած իր «Հասարակական կարծիք» աշխատությամբ դարձավ կարծրատիպային մտածողության և վարքագծի հայեցակարգի հիմնադիրը: Ըստ Ու. Լիպմանի՝ մարդու՝ իրականությունը մեկնաբանելու համար կիրառվող ներըմբռնողական համընդհանուր հասկացությունները ըստ էության այնպիսի հասկացություններ են, որոնք կազմում են նրա՝ իրականության ճանաչողական նմուշ-օրինակը կամ կարծրա-

տիպերը: Կարծրատիպերը ոչ այնքան ճշմարտության, իրականության ճշգրիտ արտացոլման համար գոյություն ունեն, որքան սոցիալական ճանաչողության (Lippman, 1950, 23):

Ու. Լիպմանի համար գլխավորը կարծրատիպի կայունությունն է, որը նա բացատրում է համապատասխան սոցիալական խմբի հանրային արժեքները պաշտպանելու գործառույթով: Գործնականում ցանկացած ավանդույթ, մշակութային ցանկացած չափանիշ իրենց հիմքում ունեն պատմականորեն պայմանավորված անհրաժեշտություն, որի հետ կապն արդեն կորել է: Դրա շնորհիվ, սակայն, սոցիալական գիտելիքը որպես կարծրատիպ ապրում և փոխանցվում է սերնդեսերունդ (Lippman, 1950, 81): Ու. Լիպմանի գաղափարները հետագա զարգացում ապրեցին նրա հետնորդների գործերում և բերեցին այն համոզման, որ կարծրատիպերը հուզական երանգավորմամբ նկարագրեր են, որոնց հիմքում անհատների շփման և փոխհարաբերությունների սոցիալական ու հոգեբանական փորձն է (Платонов, 2001):

Կարծրատիպերից շատերը շարունակում են ապրել՝ չնայած այն բանին, որ վաղուց դադարել են արտացոլել հասարակության իրական վիճակը: Դրանք ըստ էության վերածվել են կանանց և տղամարդկանց վարքի չափանմուշների, որոնց շնորհիվ ստեղծվում է տվյալ մշակույթին բնորոշ բարոյական փոխհարաբերությունների տիպը կանանց և տղամարդկանց միջև: Գենդերային հարաբերությունները՝ որպես մշակույթի տարրեր, անկասկած արտացոլված են լեզվում և հենց լեզվի միջոցով են փոխանցվում այս կամ այն մշակութային հանրույթի ներկայացուցիչների նոր սերունդներին: Լեզուն ոչ միայն հաղորդակցության միջոց է, այլև, սոցիալական երևույթ լինելով, շրջապատող աշխարհի ու մշակույթի արտացոլումն է: Լե-

զուն առաջարկում է կարծրատիպերի արդեն պատրաստի հավաքածու տղամարդկանց և կանանց բնորոշելու համար, որոնք բնութագրում են որոշակի սեռը, մարդու մեջ ձևավորում այն ըմբռնումը, թե ինչպես է կառուցված աշխարհը, և ինչպիսին պետք է լինի այն (Williams, Best, 1986): Յուրացնելով խոսքն ու զարգանալով՝ երեխան յուրացնում է այն ամենը, ինչը մշակույթի, մարդկային գործելակերպի ու կենսակերպի առանձնահատկությունն է: Դրանցից շատերը տեղավորվում են ենթագիտակցության մեջ, երեխան սովորում է դառնալ ինքնուրույն «սոցիալական էակ»: Ամեն օր գործածելով լեզուն՝ մենք ոչ միայն պարզապես խոսում ենք, այլև սովորում ենք, կրկնում և ամրապնդում մեր պատկերացումներն այն մասին, թե ինչպիսին պետք է լինեն տղամարդիկ և կանայք մեզ շրջապատող աշխարհում: Յուրաքանչյուր բառ բնութագրում է որևէ առարկա, իր կամ երևույթ և վերաբերմունքը դրանց նկատմամբ: Կրկնելով բառերն ու կառուցելով նախադասություններ՝ մենք կրկնում ենք դրանցում արտացոլված մշակույթը և ամեն անգամ հիշեցնում ինքներս մեզ, թե ինչ և ինչպես պետք է լինի: Արդյունքում, տիրապետելով լեզվին, մենք ձեռք ենք բերում տեղի ունեցող ամեն ինչը հասկանալու և գնահատելու բանալին, որից օգտվում ենք ամբողջ կյանքում: Ինչպես պնդում է Վ. Հումբոլդտը, լեզվական բազմազանությունն է, որ օգնում է բացահայտել աշխարհի հարստությունը, քանի որ լեզուն է մարդուն օժտում մտածողության և ընկալման տարբեր ձևերով (Гумбольдт, 1985, 349): Այսպիսով՝ լեզվական միջոցների վերլուծությունը թույլ է տալիս մոտենալ այնպիսի բարդ կառուցվածքի ընկալմանն ու վերծանմանը, ինչպիսին աշխարհի պատկերն է: Լեզվական միջոցների վերլուծությունը գենդերային տեսանկյունից թույլ է տալիս բացահայտել սեռերի հա-

դորդակցական տարբերությունները: Այսպիսով՝ լեզուն ձևավորում է մարդուն, պայմանավորում նրա վարքագիծը, կենսակերպը, աշխարհայացքը, հոգեկերտվածքը, ազգային խառնվածքը, գաղափարախոսությունը:

Պատահական չէ, հետևաբար, որ լեզվում գենդերային կարծրատիպերի հետազոտությանը նվիրված են լեզվաբանների բազմաթիվ աշխատանքներ որոնք անդրադարձ են անում կարծրատիպերի համակարգի ազդեցությանը մարդու վարքագծի վրա և լեզվում այդ դրսևորումների արձանագրման ձևերին ու եղանակներին (Телия, 1999; Cameron, 1997; Гуссейнова, 2002): Ուսումնասիրությունները փաստում են, որ գենդերային պատկերացումների որոշակի շերտ ներկառուցված է կատարելատիպերում: Դրանք ո՛չ տիպական են, ո՛չ կարծրատիպային, բայց և այնպես դրանց մասին գիտելիքները ստեղծում են նախապատկերային տպավորություն: Կատարելատիպերի վրա հիմնվելով՝ կառուցվում են դատողություններ ապագայի որակի և ծրագրերի մասին: Հանրայնացման գործընթացում աղջիկներն ու տղաները յուրացնում են վարքի այն նմուշ-օրինակները, որոնք բնութագրում են նրանց սոցիալական սեռը համապատասխան մշակույթում և զգալիորեն հիմնված են կատարելատիպերի վրա: Ընդ որում, միևնույն կարգը՝ որպես նախատիպ, կարող է ունենալ կատարելատիպերի տարբեր նմուշ-օրինակներ (տե՛ս Quasthoff, 1978):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ավանդաբար, կարծրատիպ ասելով, հասկանում են ինչ-որ կաղապար (կլիշե), որի հիման վրա տեղի են ունենում տեղեկատվության ընկալումն ու գնահատումը: Ըստ Ե. Բարտմինսկու՝ կարծրատիպը առարկայի սուբյեկտիվորեն սահմանված պատկերացումն է, որում համագոյակցում են նկարագրողական ու գնահատողա-

կան հատկանիշները, և որը սոցիալականորեն մշակված ճանաչողական նմուշ-օրինակների շրջանակում իրականության մեկնաբանման արդյունք է (Бартминский, 1995, 7):

Գենդերային կարծրատիպը *սոցիալական* կարծրատիպի տեսակներից է: Նշյալ հասկացությունը սահմանելու դժվարությունը բացատրվում է նրանով, որ այն գործածում են ամենատարբեր ուղղություններ ներկայացնող գիտնականներ՝ սոցիոլոգիա, ազգագրություն, հոգեբանություն և լեզվաբանություն: Այս գիտաճյուղերից յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանում կարծրատիպի հասկացությունը, սակայն դրանց սահմանումներում կան բազմաթիվ փոխլրացնող տարրեր: Անհնար է լեզվում կարծրատիպերի հետազոտությամբ զբաղվել՝ չօգտվելով այլ գիտությունների տվյալներից, որոնցում այդ հասկացության մշակումը սկսվել է շատ ավելի վաղ, քան լեզվաբանության մեջ: Դա թույլ է տալիս ավելի խորությամբ հասկանալ ու մեկնաբանել կարծրատիպը: Կարծրատիպեր վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել կարծրատիպականացման ինչպես բացասական, այնպես էլ դրական հետևանքները: Տեղեկատվության սղության պայմաններում այլ մարդու մասին կարծրատիպից բխող դատողությունները հաճախ գործում են որպես կանխատրամադրվածություն: Տվյալ դեպքում սոցիալական կարծրատիպը հաճախ կեղծ է և պահպանողական դեր է կատարում՝ ձևավորելով սխալ պատկերացումներ տեղի ունեցածի մասին, խեղաթյուրելով կատարվածի մեկնաբանության գործընթացը և միջանձնային համագործակցության բնույթը: Ցանկացած սոցիալական կարծրատիպ, որ ճիշտ է մի իրավիճակում, կարող է սխալ լինել մեկ այլ դեպքում և շրջապատող հանրույթի նկատմամբ անձի կողմնորոշման հարցի լուծման համար արդյունավետ չլինել: Մյուս կողմից՝ սոցիալական կարծրատիպերի առկայությունը

նը էական դեր է խաղում սոցիալական կյանքում: Նախ՝ կարծրատիպը թույլ է տալիս կտրուկ նվազեցնել փոփոխվող իրականությանն արձագանքելու ժամանակը, երկրորդ՝ արագացնել ճանաչողության գործընթացը, երրորդ՝ ներկայացնել ինչ-որ նախնական հիմք՝ տեղի ունեցածի առնչությամբ կողմնորոշվելու համար: Այսպիսով՝ կարծրատիպերը անհրաժեշտ գործառույթ են կատարում միջանձնյա ըմբռնման գործընթացները կարգավորելու հարցում:

Ամփոփելով նշենք, որ սոցիալական կարծրատիպը արտահայտվում է անձի վարքի (այդ թվում՝ լեզվական) կարծրատիպի ձևով: Այն ձևավորվում է ինքնաբերական զգացմունքների ու հույզերի հիման վրա, սակայն դրանով հանդերձ՝ պայմանավորված է մարդկանց միասնական գիտակցության մեջ ամրագրված զարգացման բնական պայմաններով: Մարդկանց մեծամասնությունը կարծրատիպերի կրող է, սակայն դրանք կարող են փոփոխվել՝ կախված այս կամ այն երկրում պատմական, միջազգային և անգամ ներքաղաքական իրավիճակից:

1.4. Գենդերային կարծրատիպերը անգլիական հանրամշակույթում

Անգլիական գիտակցության մեջ գոյություն ունեն որոշակի կարծրատիպեր, որոնք կայուն հատկանիշներ են վերագրում տղամարդկանց և կանանց: Հասարակության կողմից պարտադրվող որոշ կարծրատիպերի արտահայտությունը կարելի է հստակորեն տեսնել լեզվում: Այդ կարծրատիպերը արտացոլում են լեզվակիր հանրության բնավորությունն ու մշակույթը: Գենդերային կարծրատիպերը մեր գիտակցության մեջ գործում են *ճիշտ է/սխալ է* սկզբունքով: Նշյալ նախադրյալները ձևավորում են որոշակի վարքագիծ, միևնույն հատկանիշներին տրվում են տարբեր գնահատականներ՝ կախված այն բանից, թե որ սեռին է վերագրվում բնութագիրը (տե՛ս Ярыгова, 1998): Օրինակ՝ եթե կնոջը ասվի, որ նա ունի «տղամարդու խելք», ապա դա նրա համար հաճոյախոսություն կլինի: Ընդհակառակը՝ եթե տղամարդուն ասվի, որ նա «կնոջ բնավորություն» ունի, ապա կընկալվի որպես վիրավորանք:

Ժամանակակից խոսակցական անգլերենից բերենք մի քանի օրինակ՝ համոզվելու համար, թե որ «**գենդեր**»-ն է (արական, թե իգական) գերակշռում այնտեղ: Անգլիական ժողովրդի արականությունը արտահայտվում է այնպիսի բառույթներով, ինչպիսիք են՝ **mankind, manpower, chairman, foreman: Man** բաղադրիչը անգլերենում ձևավորել է նաև այնպիսի նորակազմություններ, ինչպիսիք են՝ **showman, statesman, outdoorsman** (որսի և բնության գրկում հանգստի սիրահար), **alphaman** (ֆանտաստիկ հերոս, որը իր հակառակորդ տղամարդկանց գերազանցում է արտաքինով, հարստությամբ, ազդեցությամբ): Անգլերենում **man** բառը ունի երկու իմաստ. այն կարող է նշա-

նակել մարդ արարած (**human being**) կամ տղամարդ արարած (**male human being**): Ենթադրվում է, որ նախկինում սոցիալական ոլորտում տեղի ունեցած փոփոխությունների համաձայն՝ **man** միավորը՝ որպես սեռային եզրույթ օգտագործելը հանգեցրել է ամենօրյա խոսքում **woman** բառի հաճախակի գործածության բացառման, որը անգլիական հասարակությունում կնոջ դերի խեղաթյուրված պատկերացման հետևանք է: Այս տեսանկյունից գենդերային հատկանիշն օգտագործող լեզուն կապված է անգլիական հասարակությունում տղամարդկանց ու կանանց դերերի վերաբերյալ որոշակի կարծրատիպերի հետ: Իգական սեռ նշանակող այն բառերի օգտագործումը, որոնք վերաբերում են զարգացման ավելի վաղ շրջանում գտնվող կենդանի արարածներին (**girls, babes, chicks** և այլն), վկայում է անգլիացիների այն կարծրատիպային համոզմունքի մասին, ըստ որի՝ կնոջ բանականությունը գտնվում է զարգացման ավելի ցածր աստիճանում:

Հասարակության մեջ կնոջ դերի արտացոլման հաջորդ կարևոր ցուցանիշը նրան դիմելու ձևն է: Դիմելաձևերի ժամանակակից միտումներից է **Ms** հապավման ի հայտ գալը՝ ինչպես ամուսնացած, այնպես էլ չամուսնացած կանանց դիմելու համար, որը բազմաթիվ վեճերի պատճառ է դարձել լեզվաբանների, մասնավորապես ֆեմինիստ լեզվաբանների շրջանում: **Ms** դիմելաձևը պետք է փոխարիներ **Miss** և **Mrs** ձևերին, որպեսզի կնոջ ընտանեկան դրությունը ուշադրություն չգրավեր և այդ առումով համարժեք լիներ **Mister** ձևին: Իրականում **Ms** դիմելաձևը ավելացավ **Miss** և **Mrs** ձևերին:

Անգլիական հասարակության մեջ ազգականների հետ շփումը ենթադրում է պաշտոնականության բացակայություն, ուստի ազգականներին դիմելաձևերը, բացառությամբ չեզոք

mother-ի ու *grandmother*-ի, պատկանում են խոսակցական լեզվին կամ սլենգին (օրինակ՝ *sis*, որը համարժեք է հայերեն «*քույր*» դիմելաձևին, *bro*՝ «*եղբայր*» դիմելաձևին): Շատ հաճախ գործածվում են նաև անթույլատրելի և վիրավորական լեզվական միավորներ կանանց անունների փոխարեն (օրինակ՝ *You, slut, come here!*):

Կնոջը անգլերենում բնութագրում են, նախ և առաջ, արտաքինով (օրինակ՝ “*thunderchicken*” – անհրապույր կին, “*dollybird*” – տիկնիկ, գեղեցիկ աղջիկ), վարքով (օրինակ՝ “*clingingvine*” – թույլ, անօգնական կին, որը լիովին կախված է ամուսնուց), սոցիալական դերով, մասնագիտությամբ (օրինակ՝ “*policewoman*” – կին ոստիկան): Մասնագիտությունների մեծ մասի անվանումներն անգլերենում առհասարակ չեն նախատեսում իգական տարբերակ: Այդ մասնագիտության տեր կնոջը նշելու համար պետք է դիմել տարբեր սպասարկու բառերի օգնությանը՝ *lady-professor, medicine women, she-doctor*:

Անգլերենում զգալի են կնոջ արատները բնութագրող բառերը (*scarletwoman, hooker, callgirl, hustler, workinggirl, b-girl, ladyoftheevening, fancylady, streetwalker*):

Պակաս ուշագրավ չեն անգլիական ասացվածքները, որոնք ընդհանուր առմամբ հաստատում են հասարակության նախապաշարմունքներն ու նախասիրությունները՝ աշխարհը բաժանելով երկու տարածքի՝ տղամարդկանց և կանանց, ընդ որում, տղամարդու համեմատ կնոջ սոցիալական նվազ ակտիվությունը ևս մեկ անգամ հաստատելու միտումով: Լեզուն ինքն է պարտադրում սոցիալական պատկերացումների որոշակի կարծրատիպեր՝ *a woman of pleasure; a woman of quality*:

Սեռի հանրամշակութային պայմանավորվածությունը, դրա ծիսականացումը օրինաչափ են դարձնում գենդերային կարծ-

րատիպերի արտացոլումը լեզվում և դրանց հետազոտումը: Տվյալ մշակույթում սեռերից յուրաքանչյուրին վերագրվում են մի շարք պարտադիր նորմեր, գնահատականներ և կարծրատիպեր, որոնք կանոնակարգում են գենդերային վարքագիծը: Կարծրատիպերը այս կամ այն չափով ազդում են յուրաքանչյուր մարդու վրա:

Արմատացած պատկերացումների համաձայն՝ անգլիական հասարակության մեջ կանանց պակաս արժեք է վերագրվում, քան տղամարդկանց: Այս գենդերային կարծրատիպը հաստատուն տեղ է գտել անգլիական ասացվածքներում (մանրամասն տե՛ս Гаспарян, Князян, 2010): Օրինակ՝

A good Jack makes a good Jill (Nazarian, 1999, 103).

A man's best fortune, or his worst, is a wife (Kouyoumdjian, 1967, 4)

A dead wife is the best goods in a man's house (Kouyoumdjian, 1967, 2).

Սակայն հանդիպում են նաև այնպիսի ասացվածքներ, որոնցում կնոջը վերագրվում է գլխավոր դերը տղամարդու կյանքում: Օրինակ՝

A man without wife is but half a man (Nazarian 1999: 168).

Behind every successful man is a woman (Kouyoumdjian, 1967, 6).

He that has a white house and a fair wife, never wants trouble (Kouyoumdjian, 1967, 19)

Հատկանշական է, որ ասացվածքներում կինը արժեք է լուր պետ «ամուսին» և «ընտանեկան օջախի պահապան»:
Օրինակ՝

A good wife is a good prize (Kouyoumdjian, 1967, 3).

A good wife and health is a man's wealth (Kouyoumdjian, 1967, 3).

A cheerful wife is the joy of life (Kouyoumdjian, 1967, 8).

Անգլիական ասացվածքներում ու ասույթներում՝ որպես ժողովրդի լեզվամտածողության արդյունք, ևս գերակշռում են կնոջ բացասական բնորոշումները՝ բնութագրելով նրան որպես հիմար և արատավոր էակ, մինչդեռ տղամարդուն հաճախ տրվում են դրական բնորոշումներ: Օրինակ՝

If the husband be not at home, there is nobody (Kouyoumdjian, 1967, 20).

Men make houses, women make homes (Kouyoumdjian, 1967, 24).

When an ass climbs a ladder, we may find wisdom in a woman (Kouyoumdjian, 1967, 44).

Beauty is only skin-deep (Nazarian, 1999, 30).

A nice wife and a back door do often a rich man poor (Kouyoumdjian, 1967, 5).

Վերոնշյալ օրինակների համաձայն՝ անգլերենն ավելի բարյացակամ է տղամարդկանց գենդերային վարքի նկատմամբ: Այդուհանդերձ, լեզվի գենդերայնության հարցը մնում է բաց, քանի որ հետազոտությունների մեծ մասը հանգում է այն եզրա-

կացության, որ անգլերեն բառերի հիմնական մասը բացարձակապես չեզոք է:

Անգլերենում այնպիսի ածականներ կան, որոնք հիմնականում կիրառվում են կանանց առնչությամբ, օրինակ՝ **beautiful, pretty, alluring** և անհամեմատ ավելի քիչ՝ տղամարդկանց: Դրանցում սովորաբար ներառված են իմաստներ, որոնք մասնանշում են կնոջ թուլությունները, զիջողամտությունը, սոցիալապես անպաշտպան լինելը, սակայն հասարակությունը ավանդաբար բնութագրերի հենց այդ հավաքածուն է առավել արժեքավոր համարում կանանց համար: «Մարդկության թույլ (նույնն է թե՛ գեղեցիկ, լավագույն և այլն) կես» (**the weaker sex, the fair sex**) շրջասույթներում գլխավոր իմաստակիր բառը մակդիրն է: Իսկ «կես» բառի իմաստը անցնում է երկրորդ պլան:

Այսպիսով՝ գենդերային հատկանիշների դասական դրույթներից ակնհայտ է դառնում, որ անգլերենում երկու սեռերի անձինք նշանակող չեզոք բառերը արական սեռի բառեր են: Իգական սեռի բառերը ձևավորվում են արական սեռի բառերից (ավելացնելով որոշ վերջածանցներ):

Ազգային գիտակցության ու մշակույթի ձևավորման հիմքում մարդու վարքագծի կարգավորիչների դերում հանդես են գալիս ինչպես բնածին, այնպես էլ հանրայնացման գործընթացում ձեռք բերվող գործառույթներ՝ մշակութային կարծրատիպեր, որոնք յուրացվում են՝ սկսած այն պահից, երբ մարդն սկսում է նույնականացնել իրեն որոշակի էթնոսի, որոշակի մշակույթի հետ և իրեն գիտակցել որպես դրանց մասնիկ: Կարծրատիպերի ձևավորման հարցում կարևոր դեր է խաղում մարդկանց կյանքում որոշակի օբյեկտների, երևույթների հաճախորդությունը, որը հաճախ արտահայտվում է ավելի

տևական մարդկային շփումներով հենց այդ առարկաների հետ, քան այլ առարկաների, որը և հանգեցնում է նրանց կարծրատիպացմանը: Լեզվաբանական հետազոտությունների շրջանակներում կարծրատիպերը ներկայացված են որպես գիտելիքների ու գնահատականների պահպանման հատուկ ձևեր, այսինքն՝ այսպես ասած՝ վարքը ուղղորդող հասկացույթներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է նշանակում *գենդերային կարծրափայ:*
2. Որո՞նք են կարծրատիպերի տեսակները, հատկությունները և գործառույթները:
3. Կարելի՞ է արդյոք հաղթահարել գենդերային կարծրատիպերը:
4. Գենդերային կարծրատիպերի ի՞նչ օրինակներ գիտեք հայ իրականությունից:
5. Ի՞նչ փոփոխություններ են կրել գենդերային կարծրատիպերը Հայաստանում վերջին տասնամյակում:
6. Որո՞նք են կարծրատիպերի բացասական հետևանքները լեզվում:
7. Կարո՞ղ են արդյոք ԶԼՄ-ները փոփոխել գենդերային կարծրատիպերը:
8. Ինչպիսի՞ մասնագիտություններ են նշվում իգական և արական դերերի համար:
9. Ի՞նչ ազդեցություն են ունենում կարծրատիպերը գենդերային դերերի ձևավորման գործում:

Քննարկման թեմաներ

1. Վերլուծելով կնոջ կերպարը պատմության ընթացքում՝ Ջ. Հանտերը եզրակացրել է, որ ընդհանուր առմամբ դա ոչ լիարժեքության կերպար է, իսկ կնոջ ազատագրման գործընթացը դեռևս վաղ անտիկ շրջանից ուղղակիորեն կապվում էր ապակառուցողական սոցիալական հետևանքների, բարոյականության անկման և ընտանիքի քայքայման հետ (Hunter, 1976): Արտահայտեք ձեր կարծիքը այս հարցի վերաբերյալ:

2. Ամփոփելով հասարակության մեջ տղամարդկանց և կանանց դերի մասին գոյություն ունեցող ավանդական պատկերացումները՝ Ռ. Ռ. Վերման նշում է, որ կնոջ էությունը ավելի հաճախ բնութագրվել է հետևյալ յուրահատկություններով.

- կինը ոչ լիարժեք և կախման մեջ գտնվող էակ է,
- կինը տղամարդուց ավելի ցածր էակ է, քանի որ նրան հատուկ են ծայրահեղ սահմանափակվածությունն ու թուլությունը,
- կինն իր ներքին էությամբ արժեք չունի,
- կնոջ հիմնական կոչումը տղամարդուն ծառայելն ու նրան օգտակար լինելն է, սեռական զուգընկերության և մայրության համակարգից դուրս նրա գոյությունն անիմաստ է և երկրորդական նշանակություն ունի,
- կինը ինքնըստինքյան անձնագոհ է, սիրող, համբերատար, քնքուշ և զգացմունքային, որոնք և նրա ամենամեծ առաքիլություններն են (Bepma, 1993):

Արդյոք համակարծիք եք Ռ. Ռ. Վերմայի հետ:

3. Ծնողների կողմից իրենց երեխաների ընդունակությունները գնահատելիս Ջ. Էբլզը ցույց է տվել, որ ծնողները, ելնելով գոյություն ունեցող կարծրատիպից, տղայի մաթեմատիկա-

կան ընդունակությունները ավելի բարձր են գնահատել, քան դստեր, նույնիսկ այն դեպքում, երբ նրանց առաջադիմությունը նույնն էր (Eccles, 1984): Ծնողները մաթեմատիկայից տղաների բարձր առաջադիմությունը բացատրում են նրանց ընդունակություններով, իսկ դուստրերի նույն առաջադիմությունը՝ ջանասիրությամբ: Ի՞նչ կարծիք կարտահայտեք այս հարցի վերաբերյալ:

4. Հայ հասարակությունում արդյո՞ք գոյություն ունի գենդերային խտրականություն:

5. Գենդերային կարծրատիպերի փոփոխումը և դրանց արտացոլումը խոսքում:

Գործնական առաջադրանքներ

1. Ներկայացրեք արականության և իգականության տասական հատկանիշ և քննարկեք՝ փորձելով հասկանալ, թե ինչու են կարևոր հենց այդ հատկանիշները:

2. Ավարտեք հետևյալ միտքը՝ *«Լինել կին/տղամարդ նշանակում է....»*:

3. Ներկայացրեք տարբեր մշակույթներում կանանց և տղամարդկանց դերերի վերաբերյալ առկա կարծրատիպերը:

4. Նշեք հայ և անգլիական հասարակության մեջ առկա կարծրատիպեր, որոնք խոչընդոտում են կանանց՝ որոշակի որակների, հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը:

Գրականություն

1. **Бартминский Е.**, Этноцентризм стереотипа: Результаты исследования немецких (Бохум) и польских (Люблин) студентов в 1993-1994 годах. // Речевые и ментальные стереотипы в синхронии и диахронии: Тез. конф. М., 1995. с. 7-9.
2. **Верма Р. Р.**, Отсутствующая личность. // Феминизм: восток, запад, Россия. М.: Наука, 1993. с. 146-156.
3. **Гаспарян С.К. Князян А.Т.**, Гендерность в английской паремиологии и фразеологии. Сб. научных трудов «Լեզու և գրականություն գիտ. Ինստիտյան ժամանակակից հարացույցում». Ереван, 2010, с. 49-52.
4. **Гуссейнова И.А.**, О некоторых формах представления гендерного аспекта в коммерческих дескриптивных рекламных текстах // Гендер как интрига познания: Альманах. Пилотный выпуск. Гендерные исследования в лингвистике, литературоведении и теории коммуникации. М.: Рудомино, 2002, с. 57-66.
5. **Гумбольдт В. фон.**, Философия и язык культуры. М.: Прогресс, 1985.
6. **Матевосян Л.Б.**, Языковое сознание. Стереотипный пласт. М.: Институт языкознания РАН; Ер.Авторское издание, 2007.
7. **Прохоров Ю.Е.**, Национальные социокультурные стереотипы речевого общения и их роль в обучении русскому языку иностранцев. Изд. 3-е, стереотипное. М.: Едиториал УРСС, 2003.
8. **Платонов Ю.П.**, Этническая психология. СПб.: Пресс, 2001.
9. **Телия В.Н.**, Первоочередные задачи и методологические проблемы исследования фразеологического состава языка в контексте культуры // Фразеология в контексте культуры. Ред. В.Н. Телия. М.: Языки русской культуры, 1999, с. 13-24.
10. **Ягубова М.А.**, Оценка в разговорной речи мужчин и женщин // Языковая личность: социолингвистические и эмотивные аспекты. Волгоград - Саратов: Перемена, 1998, с.43-54.

11. **Cameron D.**, Theoretical Debates in Feminist Linguistics // Gender and Discourse / R. Wodak. London: SAGE Publications, 1997. p. 21-36.
12. **Eccles J. S.**, Sex Differences In Mathematics Participation // M. L. Maehr, M. W. Steinkamp (eds.). Women in science: Advances in motivation and achievement. Greenwich, CT, JAI Press, 1984, v. 2, p. 89-100.
13. **Lippman W.**, Public Opinion. New York, 1950.
14. **Williams J. E., Best D. L.**, Sex Stereotypes and Intergroup Relations // S. Worshel, W. G. Austin (eds.). Psychology of intergroup relations. Chicago: Nelson-Hall. 1986, p. 244-259.
15. **Quasthoff U.M.**, The Uses Of Stereotype In Everyday Argument, Journal of Pragmatics, Vol. 2/1. USA: Springer, 1978. pp. 1-48.

1.5. Գենդերային անհատի խոսքային նկարագիրը անգլիական «Կենցաղային» անեկդոտներում

Սոցիալական պայմանների (սոցիալական և մասնագիտական կարգավիճակի, տարիքի, հաղորդակցային դերի և այլն) հավասարության դեպքում տղամարդիկ և կանայք ընտրում են խոսքային վարքագծի տարբեր ռազմավարություններ: Միևնույն ժամանակ գենդերային դերերն ու նորմերը զգալիորեն փոփոխվում են՝ կախված հաղորդակցային իրավիճակից և խոսողի/գրողի նպատակից: Գոյություն չունի զուտ «տղամարդու լեզու» և զուտ «կնոջ լեզու». գենդերը «լողացող» չափորոշիչ է, որն ազդում է մարդու հաղորդակցային վարքագծի վրա: Այս առումով ավելի իրավաչափ է խոսել արական և իգական խոսքի գենդերային պայմանավորվածությամբ հաղորդակցային առանձնահատկությունների և հաղորդակցային վարքագծի ոճերի մասին, որոնք պատճառաբանված են անձնային գենդերային հատկություններով:

Արտալեզվական իրակությունների լեզվական ներկայացման ձևը մեծ մասամբ որոշվում է հաղորդակցվողի սոցիալ-հոգեբանական բնութագրով: Կախված սեռից, տարիքից, կրթական մակարդակից, սոցիալական կարգավիճակից, մշակութային համապատկերից, հաղորդակցվողին շրջապատող հասարակական, գաղափարական միջավայրից՝ որոշվում է առարկայական աշխարհի լեզվական կադապարման ձևը: Այդպիսով՝ ակնհայտ է, որ մեր հետազոտությունը կարող է օգնել հասկանալու հաղորդակցվողների կողմից աշխարհի հուզական ընկալման տարբերությունները և դրա արտացոլումն անգլիական երգիծական խոսույթում՝ կախված գենդերային պատկանելությունից:

Դասագրքի սույն մասում ներկայացվում են տղամարդկանց և կանանց խոսքի՝ անգլիական «կենցաղային» անեկդոտներում դրսևորվող, հուզարտահայտչական միջոցները բառային մակարդակում.

- հուզագնահատողական բաղադրիչով բառապաշար,
- հայիոյական բառապաշար,
- կոչական բառեր,
- փոքրացուցիչ-փաղաքշական բառեր,
- նորաբանություններ, տերմինաբանական/մասնագիտական բառապաշար,
- ուժգնացնող բառեր (ինտենսիֆիկատորներ),
- ձայնարկություններ:

Գենդերային խոսքային առանձնահատկությունները ուսումնասիրելիս նաև պետք է հաշվի առնել գիտակցված և ոչ գիտակցված լեզվական միջոցների կիրառման կարևորագույն խնդիրը: Մարդու հոգում տեղի է ունենում չափազանց բարդ փոխկապակցություն գիտակցված և ոչ գիտակցված լեզվական տարրերի միջև: Եվ եթե ելնենք այն ընդունված համոզմունքից, որ աշխարհի գաղափարագեղարվեստական ընկալումը գիտակցական գործընթաց է, ապա որոշիչ դեր պետք է տալ գիտակցված տարրերին: Ինչ վերաբերում է ոչ գիտակցված տարրերին, ապա դրանք խոսքում հանդես են գալիս որպես խոսողի կամ գրողի պոռթկում, աստիճանաբար ձեռք են բերում համապատասխան նշանակություն և գիտակցվում են խոսողի կամ գրողի կողմից: Լեզվական միջոցները, որոնք տղամարդիկ և կանայք օգտագործում են գիտակցված և ոչ գիտակցված, բացահայտում են ոչ միայն նրանց հոգեբանական կերպարը, այլև նրանց աշխարհընկալումը, գեղագիտական հա-

յացքները, պատկերավոր մտածողությունը: Տղամարդիկ և կանայք ընտրում են լեզվական միջոցները՝ նաև ելնելով իրենց գրույցի բովանդակությունից: Ընդհանուր առմամբ նկարագրման և փոխաբերականացման ժամանակ կանայք դիմում են այն իմաստային դաշտերին, որոնք կապված են կենցաղի, բնության, կենդանիների հետ, իսկ տղամարդիկ՝ սպորտի, որսորդության, մասնագիտական և ռազմական ոլորտների հետ:

Տղամարդկանց և կանանց բառագործածության մեջ գոյություն ունեն տարբերություններ: Մարդու գնահատողական գործունեությունը, որն անմիջականորեն շոշափում է նրա հետաքրքրությունները, պահանջմունքները, դիրքորոշումը, սերտորեն կապված է նրա հուզական ոլորտի հետ: Ցանկացած հուզավիճակ պայմանավորված է ընկալվող իրականության նկատմամբ մարդու վերաբերմունքով և իր ու իր գործունեության համար այդ իրականության նշանակության գնահատմամբ: Դրական հույզեր առաջանում են այն դեպքում, երբ տեղի է ունենում պահանջմունքի բավարարում, հաստատվում է հավասարակշռություն սուբյեկտիվի և օբյեկտիվի միջև, իսկ իրադարձությունը, առարկան գնահատվում են որպես դրական: Բացասական հուզավիճակ առաջանում է այն պահին, երբ մարդը գիտակցում է տվյալ պահին իր անհամապատասխանությունը, կամ երբ շրջապատող իրականության երևույթը գնահատվում է որպես բացասական: Հուզավիճակին համապատասխանում են վարքի ընդհանուր համակարգին բնորոշ փոփոխությունները, որոնք արտահայտվում են որոշակի ֆիզիոլոգիական, ինչպես նաև խոսողի լեզվական վարքի համակարգի փոփոխություններով:

Հուզական գնահատականը ուղղված է խոսակցի հուզավիճակը փոխելուն և համապատասխան արձագանք առաջացնե-

լուն, իսկ բանականը ուղղված է արտահայտված կարծիքին համաձայնելուն կամ դրանից հրաժարվելուն (տե՛ս Фомина, 1996): Գնահատականի նպատակահարմարությունը ուժեղանում է, եթե դրանից բխող կարծիքները միանում են, իսկ հուզականությունը սաստկանում է բառապաշարի արտահայտչականության ու գերզգայնության շնորհիվ:

Լեզվական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ անգլիական անեկդոտներում գնահատողական տեղեկատվության կրողը մեծ մասամբ **գնահատողական ածականն է**, որը կատարում է հատկանշման գործառույթ: Կանանց և տղամարդկանց կողմից լեզվական միավորների կիրառման ամենավառ տարբերությունները նկատվում են ածականների բառաքերականական կարգին պատկանող միավորներ օգտագործելիս:

Հետազոտության ընթացքում պարզվել է, որ լեզվական որոշ միավորներ (տվյալ դեպքում՝ **ածականները**), որոնք, համաձայն դրանցում ամրագրված իմաստների և հուզարտահայտչական երանգների, ի սկզբանե օգտագործվում են դրական կամ բացասական գնահատական տալու համար, կարող են, կախված համատեքստից, կիրառվել հակառակ գնահատականն արտահայտելու համար:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում առավել հաճախակի գործածությամբ բնութագրվում են **ածական-որոշիչները**, որոնք հիմնականում գործառվում են երկխոսություններում: Ածական-որոշիչների մեջ իմաստաբանորեն առանձնանում են գնահատողական ածականները: Ընդ որում, տղամարդիկ ավելի շատ են գործածում **հարաբերական ածականներ**, իսկ կանայք՝ **որակական**: Հուզագնահատողական ածականները (**good, bad, lovely, glad, happy** և այլն) բառերի ամենատարածված խումբն են երկխոսություններում: Կանանց խոսքը աչ-

քի է ընկնում հուզագնահատողական բառապաշարով, իսկ տղամարդկանց գնահատողական բառապաշարը հաճախ ոճական առումով չեզոք է: Գիտակցության գնահատողական կարողությունը գործաբանական գործունեություն է. այն կապված է բազմաթիվ արտալեզվական գործոնների՝ ազգային-մշակութային կարծրատիպերի, հասարակության քաղաքական և տնտեսական իրավիճակի, այս կամ այն սոցիալական խավի, այս կամ այն մասնագիտական գործունեության, տարիքային խմբի պատկանելության հետ: Այսպիսով՝ գնահատականը սերտորեն կապված է խոսող սուբյեկտի հետ, հետևաբար այն ոչ միայն կառուցվածքային-իմաստային և գործաբանական, այլև գենդերային առանձնահատկություն ունի:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում գործածվող **պիտրականորոգ-գնահատողական** ամբողջ բառապաշարից ընտրվել են միայն այն **ածականները**, որոնք դրսևորվում են հաղորդակցմանը մասնակից անհատի խոսքում՝ ուղղված լինելով տղամարդուն կամ կնոջը, և բնութագրում են նրանց ինչպես դրական, այնպես էլ բացասական լույսի ներքո:

Անգլիական անեկդոտներում կանանց և տղամարդկանց վերաբերյալ գործածվում են տարբեր բառեր՝ հատկապես նկարագրական և գնահատողական: Երբ խոսում են կնոջ մասին, նրան անվանում են **foolish, silly, stupid, ugly, slutty, gorgeous, beautiful, attractive, charming, slender, slim, awkward, capricious, coquette, talkative** և այլն:

Օրինակ՝

1) *One day Adam sat outside the Garden of Eden shortly after eating the apple, and wondered about men and women. So looking up to the heavens he says, "Excuse me God, can I ask you a few questions?"*

God replied, "Go on Adam, but be quick. I have a world to create."

So Adam says, "When you created Eve, why did You make her body so curvy and tender unlike mine?"

"I did that, Adam, so that you could love her."

"Oh, well then, why did You give her long, shiny, beautiful hair, and not me?"

"I did that Adam so that you could love her."

"Oh, well then, why did You make her so **stupid**? Certainly not so that I could love her?" "Well Adam, No. I did that so that she could love you."

<http://www.jokebuddha.com/joke/Adam_talks_to_God_1>

2) The man approached the very beautiful woman in the large supermarket and asked,

-You know, I've lost my wife here in the supermarket. Can you talk to me for a couple of minutes?

-Why? -Because every time I talk to a **beautiful** woman my wife appears out of nowhere.

<<http://www.native-english.ru/anecdotes/1661>>

Վերլուծելով վերոբերյալ օրինակները՝ կարելի է պնդել, որ (**stupid, beautiful**) **ածականների** իրական բովանդակությունը ձևավորվում է ոչ միայն հիմնանշանակության և բուն լեզվական նշանակության իմաստային հատկանիշներից, այլև ներառում է պիտակավորող-գնահատողական հատկանիշը: Ածականների՝ որպես բառակարգի, բնորոշ է սուբյեկտիվ-գնահատողական նշանակությունների և համապատասխան առնշանակությունների առկայությունը:

Անկասկած, գնահատականը չի կարող դիտարկվել առանց հույզերի հետ դրա կապի: Խոսողի զգացմունքները մարդկանց, իրերի և իրադարձությունների նկատմամբ ցույց են տալիս, թե ինչպես է նա դրանք գնահատում: Հուզական գնահատականը ինքնին մարդկային է, կարող է վերաբերել տղամարդուն կամ կնոջը և այն ամենին, ինչը որևէ կերպ կապված է նրանց հետ, առնչվում է նրանց ֆիզիկական, հոգեկան և սոցիալական էությունը: Այլ կերպ՝ գնահատվում է այն, ինչն անհրաժեշտ է մարդուն:

3) *The young man was obsessed by the beautiful secretary in his office. He just had to kiss her and touch her body and ...*

One day, he plucked up the courage to speak to her.

“I think you’re so gorgeous, if I paid you £250, would you come into the storeroom with me so that I can kiss you and rub my hands up and down your body?”

Now the girl liked money a lot, so she agreed and they disappeared into the storeroom. For the next 10 minutes, he showered her with kisses, unbuttoning her blouse and ravishing her breasts, but all the time, he kept murmuring, “I don’t know, I don’t know.”

Eventually, she asked, “Why do you keep saying “I don’t know?”

“Well, I don’t know how I’m going to pay you”, he replied.

<<http://hotjokes.net/i-dont-know/>>

4) *“How did it happen?” the doctor asked the middle-aged farmhand as he set the man’s broken leg. “Well, doc, 25 years ago...” “Never mind the past! Tell me how you broke your leg this*

morning.” “Like I was saying... 25 years ago, when I first started working on the farm, that night, right after I’d gone to bed, the farmer’s **beautiful daughter** came into my room. She asked me if there was anything I wanted. I said, “No, everything is fine.” “Are you sure?” she asked. “I’m sure,” I said. “Isn’t there anything I can do for you???” she wanted to know. “I reckon not,” I replied. “Excuse me,” said the doctor, “What the hell does this story have to do with your broken leg?!?!?” “Well, this morning,” the farmhand explained, “when it dawned on me what she meant, I fell off the roof!

<<http://www.xjokes.net/broken-leg.htm>>

Վերոբերյալ անեկդոտներում հետևյալ արտահայտությունները՝ “....**the farmer’s beautiful daughter**....”; “**I think you’re so gorgeous**”, պատկանում են արական սեռին և մատնանշում են, որ գնահատականը դրական է, քանի որ խոսողի իրական նպատակը գովասանք արտահայտելու մտադրությունն է: Անգլիական անեկդոտներում հաղորդակցության ընթացքում տղամարդու համար մեծ նշանակություն ունի իրադարձությունների ծավալման ժամանակի, տեղի հիշատակումը, ուստի նա հաճախ սկսում է պատմությունը հանգամանքների ներկայացմամբ (**Well, doc, 25 years ago...”: 25 years ago, when I first started working on the farm, that night, right after I’d gone to bed, the farmer’s beautiful daughter came into my room. She asked me if there was anything I wanted.....):**

Լեզվական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ տղամարդիկ կանանց գնահատում են նաև բացասական դիտանկյունից: Օրինակ՝

5) Q: How does an archeologist tell a male skeleton from a female skeleton?

A: He knows it's a female skeleton if **the jawbone is worn down.**

<<http://www.ajokeaday.com/Clasificacion.asp?ID=54&Pagina=5>>

6) A boy asks his dad, "What's the difference between potential and realistic?" The dad tells him to go ask the rest of his family if they'd sleep with Brad Pitt for a million dollars, and then he'd tell him the answer. The boy goes up to his mom and asks her. She responds, "A million dollars is a lot of money sweetheart. I could send you, your sister, and your brother to great colleges, so sure, I would!" He then goes and asks his sister to which she replies, "Brad Pitt? Hell ya, he's the hottest guy ever!" Next, the boy asks his brother who replies, "A million dollars? Hell yes I would. I'd be rich!" When the boy excitedly returns to his dad with the family's responses, the dad says, "Well son, potentially, we have three million dollars. Realistically, we have two **sluts and a queer.**"

<<http://www.laughfactory.com/jokes/sexist-jokes>>

Վերը բերված օրինակներից կարող ենք նաև եզրակացնել, որ տղամարդկանց խոսքում գերակշռում են ուսցիոնալիստական, սոցիալական գնահատականները, մինչդեռ հուզական և զգայական գնահատականները քիչ են: Տղամարդիկ ավելի հաճախ առանձնացնում են առարկայի կամ շրջապատող իրականության երևույթի էթիկական, քան գեղագիտական կողմը: Ըստ մեր հետազոտության արդյունքների՝ անգլիական «կենցաղային» անեկդոտներում տղամարդը կնոջը առաջին հերթին

գնահատում է արտաքինով: Իսկ երբ խոսում են տղամարդու մասին, նրան անվանում են **strong-willed, proud, villain, courageous, firm, bold, arrogant, boastful, broad-shouldered, self-confident, handsome, boring, lazy, drunken, fat, cheap, coward** և այլն: Այս տարբերությունները անառարկելի չեն, կնոջը կարող են անվանել նաև **conceited, imperious**, իսկ տղամարդուն՝ **sweet, silly, foolish**, սակայն որպես բնութագրական ածականներ անգլիական երգիծական խոսույթում դրանք հանդիպում են հազվադեպ, սովորաբար այն դեպքում, երբ տղամարդուն ուզում են վերագրել կնոջ հատկանիշներ, իսկ կնոջը՝ տղամարդու:

Տղամարդուն և կնոջը մեծ մասամբ (բացառությամբ ածականների, որոնք գենդերային առումով չեզոք են, ինչպիսիք են՝ **kind, remarkable, honest** և այլն) գնահատում և նկարագրում են տարբեր բառերով:

Տղամարդիկ իրենց գնահատականներում առավելությունը տալիս են իրենց սեռի ներկայացուցիչներին՝ նշելով ուժը, օրինավորությունը, համարձակությունը, մեծահոգությունը և ազնվությունը: Անգլիական «կենցաղային» անեկդոտներում տղամարդկանց մեջ բացասական արծազանք են առաջացնում տղամարդկանց անմտությունը, հիմարությունը, դավաճանությունը, թեև վերջին երկու հատկանիշները կարծրատիպային պատկերացման հետևանքով վերագրվել են կանանց: Օրինակ՝

7) *A blonde guy gets home early from work and hears strange noises coming from the bedroom. He rushes upstairs to find his wife naked on the bed, sweating and panting.*

“What’s going on?” he says.

“I’m having a heart attack,” cries the woman. He rushes downstairs to grab the phone, but just as he’s dialing, his 4-year old son comes up and says, “Daddy! Daddy! Uncle Ted’s hiding in your clothes closet and he’s got no clothes on!” The guy slams the phone down and storms upstairs into the bedroom, past his screaming wife, and rips open the wardrobe door. Sure enough, there is his brother, totally naked, cowering on the wardrobe floor.

“You IDIOT!!!” says the husband, “my wife’s having a heart attack and you’re running around naked and scaring the kids!”

<<http://www.shabbir.com/jokes/blond/blondguy.html>>

Անգլիական երգիծական խոսույթում կանանց գնահատելիս արական սեռի անձանց կողմից նրանց տված դրական բնութագրումներն ավելի քիչ են, քան բացասականները: Նրանց՝ կանանց կարծրատիպային պատկերացումը դրական առումով ավելի «խղճուկ է», քան բացասական:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում հուզագնահատողական բառապաշարի նկատելիորեն մեծ խտություն է դրսևորում կնոջ խոսքը՝ հասցեագրված տղամարդկանց՝ հաճախ շեշտելով նրա բացասական հատկությունները, ինչպիսիք են՝ անխոհեմությունը, ստորությունը, անազնվությունը, դաժանությունը, եսասիրությունը, սանձարձակությունը, անբարոյականությունը:

Հետաքրքիր է նաև, որ կանանց խոսքում հանդիպում են համեմատություններ, որտեղ համեմատվող առարկաներն ու գործող անձինք հակադրվում են ծաղիկների հետ, օրինակ՝ ***the flower beamed like the sun; the rose was as red as blood; the tulip shone like a lamp in darkness; the tulip was as red as***

ruby; cheeks are red like a rose; as senseless as lilyan; passionate love is like a rose: Այս համեմատությունների օգնությամբ կանայք նկարագրում են բնության հարստությունը և արտահայտում իրենց անհատական պատկերացումը և գնահատականը գեղեցկության վերաբերյալ:

Կանանց խոսքին նաև բնորոշ է առարկաների, երևույթների և հաճույք պատճառող գործունեության առավել մանրակրկիտ ու վառ գնահատումը: Կանայք հակված են գործածելու դրական գնահատական արտահայտող ածականներ՝ դրա հետ մեկտեղ օգտագործելով համագնահատող ***good*** ածականի արտահայտչական հոմանիշները: Բացի դրանից՝ կանայք իրենց խոսքում գործածում են իմաստը շեշտող բազմաթիվ ածականներ, օրինակ՝ ***terrific, marvelous, splendid, wonderful, devine, perfect, fantastic, unbelievable, incredible, excellent*** և այլն: Դրան զուգահեռ կանայք իրենց խոսքում կիրառում են իմաստը լրացնող զանազան բառեր, ինչպես՝ ***well, you know, you see, kind of, it seems, it sounds*** և այլն:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում, որպես տղամարդկանց հասցեագրված դրական գնահատականներ, գերակշռում են հետևյալ ածականները՝ ***good-looking, charming, well-built, accommodating***: Օրինակ՝

8) *One Friday afternoon, two secretaries were hanging around the water cooler at the office. “Veronica, I just don’t know what to do,” Gloria said to her friend at work. “That good-looking Alex in accounting asked me out on a date for Saturday night. Should I go?” “Oh, my God!” her friend exclaimed. “He’ll wine you, dine you, and then use any ruse to get you up to his*

apartment. Then he'll rip off your dress". "What should I do?" asked Gloria. Her friend quickly replied, "Wear an old dress."

<http://www.native-english.ru/anecdotes/3721>

Ի տարբերություն տղամարդկանց՝ կանայք իզական սեռի ներկայացուցիչներին գնահատելիս առաջին հերթին դրականորեն առանձնացնում են նրանց խելքը, կրթվածությունը, հոգեկան հասկություններից գնահատվում են նվիրվածությունը, ազնվությունը և անկեղծությունը: Կինը բացասական գնահատականի դեպքում ավելի շատ օգտագործում է կնոջը հասցեագրված հետևյալ **մակդիրները՝ *stupid, evil, common tart, cruel, dirty cocotte, a promiscuous woman, unfeeling, insidious, vile and sordid, scandalous*** և այլն: Օրինակ՝

9) *The angry woman marched round to her next door neighbour's house and confronted her with a set of photographs.*

*"Look at these, you **common tart**, this is proof that you've been seeing my husband. There's one of the two of you in bed, this is a picture of you and him in the back seat of the car and this one shows you sitting on his knee. What do you have to say for yourself?" she snarled.*

For a few moments, the next-door neighbour looked through the photographs and then said, "Mmm, not bad. I'll have two copies of the first picture and one each of the other two."

(Sharpe, 2004:326)

Բերված օրինակից պարզ է դառնում, որ կանանց խոսքը բավականին երկար է (*Look at these, you **common tart**, this is proof that you've been seeing my husband. There's one of the*

two of you in bed, this is a picture of you and him in the back seat of the car and this one shows you sitting on his knee. What do you have to say for yourself?): Հաղորդակցության այս մարտավարությունը տարածված երևույթ է, որի շնորհիվ պահպանվում է կանանց խոսքի շարունակականությունը:

Առանձնակի հիշատակման է արժանի կանանց ինքնահեղինակության դրսևորումը անգլիական երգիծական խոսույթում: Նշյալ հնարանքը թույլ է տալիս արտահայտել խոսողի վերաբերմունքը սյուժեի նկարագրության նկատմամբ և խոսողի դերը դրանում ինքն իրեն ծաղրելու միջոցով: Ինքն իր վրա ծիծաղելու ունակությունը ավելի բնորոշ է կանանց, և դա յուրօրինակ պաշտպանական ռեակցիա է: Ըստ երևույթին, տղամարդու համար ավելի դժվար է ծիծաղել ինքն իր վրա: Հնարավոր է՝ դա պայմանավորված է առաջինը լինելու կամ դրան ձգտելու գենդերային դերով, իսկ «գլխավոր» դերում հանդես եկող մարդը չի կարող լինել ծիծաղի առարկա, այսինքն՝ նա, ում քննադատում կամ դատապարտում են:

Այսպիսով՝ վերլուծելով պիտակավորող-գնահատողական բառապաշարի կիրառումը՝ որպես հուզարտահայտչական միջոցներից մեկը, որը լեզվական անհատը գործածում է անգլիական «կենցաղային» անեկդոտներում, կարող ենք եզրակացնել, որ անգլիացի տղամարդիկ իրենց խոսքում ավելի շատ **պիպակավորող-գնահատողական բառեր** են օգտագործում, քան կանայք, ընդ որում բացասական նրբիմաստների թիվը զգալիորեն մեծ է դրական պիտակավորող գնահատականներից: Մեր կարծիքով՝ դա բացատրվում է նրանով, որ երբ մարդը բացասական հույզեր է ունենում, նրա ապրումներն ավելի խորքային բնույթ են կրում, ուստի բացասական գնահատականը միշտ քանակապես և որակապես ավելի հարուստ է՝ հաճախ կոպիտ բառապաշարի ներգրավմամբ:

Հուզարտահայտչական բառապաշարին է վերաբերում նաև **հայիոյախոսությունը**, որը խոսողի հուզական լիակատար անկաշկանդության դրսևորումն է: Հարկ է նշել, որ հայիոյանքը, հայիոյախոսությունը, անպարկեշտ արտահայտությունները (ինվեկտիվը), որոնք ագրեսիայի դրսևորման և սուբյեկտի հանրային վարկաբեկման յուրօրինակ ձևեր են նրան ուղղված տեքստի միջոցով, այս կամ այն մշակույթում միանգամայն բնականորեն ընկալվում են որպես վիրավորանք հասցեատիրոջ համար, քանի որ հայիոյական խոսքային միջոցներ գործածելով՝ խոսողը կամ գրողն արտահայտում է խոսքի հասցեատիրոջը ստորացնելու, վիրավորելու, խայտառակելու իր մտադրությունը:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում հայիոյական բառապաշարի շերտի մանրակրկիտ հետազոտությունը, դրանց գենդերային առանձնահատկությունների տեսանկյունից, թույլ է տալիս որոշել, թե կանայք և տղամարդիկ ինչպիսի անպարկեշտ արտահայտություններ են նախընտրում օգտագործել: Օրինակ՝ կանանց խոսքում **cow, bloody, slag, tart** հայիոյական բառապաշարը ուղղված է եղել կանանց, իսկ **git, bastard, idiot** բառերը՝ տղամարդկանց: Տղամարդկանց խոսքում **bird, cow** բառերը ուղղված են եղել կանանց, իսկ **bloody, bastard, wanker, sod** բառերը՝ տղամարդկանց:

Այն դեպքերում, երբ տղամարդիկ դիմում են շատ սուր և գոեհիկ հայիոյախոսության, կանայք, որպես կանոն, նախընտրում են ավելի մեղմ արտահայտություններ: Կանանց կողմից «թունդ հայիոյանքներ» (Степанов, 1969, 176) չգործածելը առաջին հերթին կարելի է բացատրել նրանց այն համոզվածությամբ, որ ագրեսիվությունը անցանկալի երևույթ է և ամեն կերպ պետք է խուսափել դրանից: Մյուս կողմից՝ կոչված լինե-

լով կրելու գեղագիտորեն նշանակալի արժեքներ՝ կանայք ամենաքիչն են դրսևորում արտաքին ագրեսիա: Տղամարդիկ օգտագործում են սուր և գռեհիկ հայիոյախոսություն, որպեսզի ազատվեն սթրեսների հետևանքով կուտակված ավելորդ ագրեսիայից (Жельвис, 1997, 53):

Վստահաբար կարելի է նշել, որ կոպիտ բառապաշարը հաղորդակցվողների արական հատվածի արտոնությունն է: Կանանց կողմից հայիոյական բառապաշարի օգտագործումը գրեթե ամենուրեք ընկալվում է որպես յուրօրինակ դավաճանություն՝ ամրագրված գենդերային կարգավիճակին:

Կանանց և տղամարդկանց սոցիալական վարքագծում առավել վառ արտահայտված տարբերությունները վերաբերում են ագրեսիվ արձագանքներին ու գործողություններին: Գոյություն ունեն բավականաչափ համոզիչ ապացույցներ, որ տղամարդիկ ավելի ագրեսիվ են, քան կանայք: Տղամարդիկ առավել հակված են բացահայտ ֆիզիկական ագրեսիայի դիմելու: Կանանց ավելի բնորոշ են անուղղակի ագրեսիայի զանազան դրսևորումները: Կանայք ագրեսիան դիտարկում են որպես վրդովմունքի դրսևորման և սթրեսից դուրս գալու միջոց, տղամարդիկ՝ որպես վարքի ձևանմուշ, գործիք, որին դիմում են սոցիալական և նյութական հատուցում ստանալու համար:

Անկասկած, հույզերի դրսևորման լարվածությունն ազդում է խոսողի լեզվական միջոցների ընտրության վրա: Նյարդային կամ ամենաթույլ սթրեսի դեպքում մարդը դիմում է հայիոյական բառապաշարի: Հայիոյական բառապաշարի բնույթը դրսևորվում է նաև ուրախության, հիացմունքի ծայրահեղ ձևերի խոսքային արտահայտման դեպքում, քանի որ գտնվելով ծայրաստիճան գրգռված վիճակում՝ խոսողը ոչ միշտ է վերահսկում իր հոգեկան և հուզավիճակների խոսքային դրսևորումները:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում տղամարդկանց խոսակցական լեզվին հատուկ է հակվածությունը ցածր ոճին և հայիոյանքին (այդ թվում՝ անպարկեշտ բառապաշարին) ոչ պաշտոնական շփումներում: Օրինակ՝

10) *Johnny tried many different jobs in his younger days. One afternoon he went into the theatrical agent's.*

"Yes?" said the agent. "What do you do?"

"Bird impressions," he replied.

*"**Bloody hell**, not another one. Go on, get on with it," said the agent.*

So Johnny flapped his wings, shat all over the agent's desk and jumped out of the window.

11) *A young girl went into confession and told the priest she had slept with four different men over the past week. Jack on Tuesday, Bill on Wednesday, Peter on Thursday and Chuck on Friday.*

"Well my child" said the priest "on your way home tonight buy two lemons and suck on them."

"But Father, will that cleanse me of my sins?" she asked.

*"No, but it'll take that **bloody damned smile** off your face."*

(Sharpe 2004:142)

Տղամարդկանց խոսքում նշված **մակդիքների (bloody hell; bloody damned smile)** ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց գործածությունը գենդերային գործոնի ազդեցությանն է ենթարկվել: Վերոնշյալ բառակապակցություններում **"damn"** և **"hell"** բաղադրիչների առկայությունը խոսում է օբյեկտի բացասական գնահատականի մասին: Անգլիական անեկդոտներում

ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց խոսքում գերակշռում է **մակդիրների** կիրառությունը: Եթե կանայք որպես մակդիրներ են օգտագործում ածականները՝ դրական և բացասական գնահատականներով տեսանելի պատկերավորության հասնելու համար, ապա տղամարդիկ նշյալ բառային հնարը կիրառում են բացասական գնահատական տալու համար:

Կենցաղային մակարդակի շփումներում տղամարդկանց խոսքային ոճին բնորոշ է նաև խոսքի դիտավորյալ կոշտացումը: Լեզվական նյութի քննությունը ցույց է տալիս, որ ոչ կոնֆլիկտային շփումներում գոեհիկ բառերը խոսողների մտերմիկ հարաբերությունների նշան են և վկայում են նրանց միջև սահմանների բացակայության մասին: Ոչ կոնֆլիկտային շփումներում գոեհիկ բառապաշարի գործածումը նաև կարող է լինել ինչ-որ բացասական երևույթների ինքնաբերական արձագանք: Տղամարդկանց բնորոշ է միտումնավոր, հաճախ կատակով խոսքի կոպտացումը: Դա հատկապես հատուկ է այն իրավիճակներին, երբ սովորաբար արտահայտվում են քնքուշ զգացմունքներ (ընտանիքի, սիրո, երեխաների մասին խոսակցություններում), այսինքն՝ շատ դեպքերում կարող ենք եզրակացնել, որ տղամարդիկ ծիծաղի տակ ձգտում են քողարկել իրենց գերզգայունությունն ու անկեղծ զգացմունքները: Անգլիացիների հումորը բավականաչափ անվայել է, ուստի կոպիտ բառապաշարի օգտագործմամբ նման կատակները շատ տարածված երևույթ են այդ մշակույթում:

Առաջինն ու ամենակարևորն այն է, որ կանանցից ակնկալվում է վայելուչ, նրբահունչ խոսք: Սա ենթադրում է, որ նրանք պետք է խուսափեն անընդհատ կրկնվող կոպիտ արտահայտություններից: Պարկեշտ բառերի ընտրության հետ մեկտեղ ակնկալվում է, որ կանայք կիրառեն ճիշտ քերականա-

կան և լեզվում առկա հնարավոր քաղաքավարի ձևերը: Այնտեղ, որտեղ տղամարդիկ դիմում են շատ սուր և գոեհիկ լուտանքների, կանաչք, որպես կանոն, նախընտրում են ավելի մեղմ ձևակերպումներ: Ընդհանուր առմամբ առավել զգալի են կանանց հոգեկան ավելոծությունները, նրանց հայացքները աշխարհի և տղամարդկանց նկատմամբ արտահայտվում են երգիծական խոսույթում, և նրանք փոխանցում են իրենց զգացմունքներն ու հույզերը զանազան ոճական հնարների օգնությամբ: Հարկ է նշել, որ անգլիական երգիծական խոսույթում «համեմատության աշխարհը» տղամարդկանց և կանանց ընկալման մեջ տարբերվում է՝ կախված նրանց երևակայությունից: Նրանց կողմից զանազան համեմատությունների օգտագործումը առաջացնում է զանազան հույզեր և իրենց խոսքին տալիս պատկերավորություն: Այս լեզվական հնարի գործածությամբ տղամարդկանց և կանանց հաջողվում է ստեղծել յուրօրինակ խոսք: Օրինակ՝

12) *An eccentric lady was in need of a piano player for her upcoming party. She placed ads and spread the word but could not find a suitable one. A bum knocked on her door and when she saw the state of his condition, she answered, "Go away." He said, "Please, won't you just give me a chance, I'm a piano player."****Well I see that you live like a monkey on a stick and I crouch like a fly.****" She was desperate so she let him in. After his performance, she couldn't believe her ears. "Wow! That sounded great, best I've heard in years. What was the name of that song?" The bum answered, "Oh, it's 'I Love Me Wife So Much I Took A Big Dump'."**"Oh" she says, "How unusual, would you play another?" He proceeded to play another tune and again she was astounded by*

the performance. "That was fantastic" she said, "What was the name of that tune?" "That one is called 'I Took My Wife From Behind And Made A Mess All Over That Carpet'." "How unusual" she replied and said, "You've got the job, but please do me a favor and if anyone asks the names of your songs, please don't tell them. And do something about your clothes; you look terrible. Go and buy a tux for the party." The bum was happy about his new job and had never bought a tux before and wound up getting one that was three sizes too small. At the big party, the crowd was amazed at his performance once again. He bowed at the crowd back and forth and ripped out the whole rear end of his trousers. One lady stepped forward clapping and said, "Sir, you are a great piano player but do you know you have a hairy ass and your balls are hanging out?" With a smile, the bum replied, "Lady, know it? I wrote it!"

(Sharpe, 2004, 120)

Բերված հատվածից հետևում է, որ կնոջ խոսքում **fly**, **monkey** բառերը օգտագործվել են ուղիղ իմաստով և նշանակում են կոնկրետ առարկաներ: Օգտագործելով համեմատություններ՝ կանայք իրենց առջև դնում են մեկ նպատակ՝ ինչքան հնարավոր է կերպարային և տպավորիչ ներկայացնել տղամարդուն, նրա հոգեկան ապրումները և հոգեվիճակները: Հարկ է նշել, որ կենդանական աշխարհի վրա հիմնված համեմատությունների օգտագործումը բնորոշ է կանանց խոսքին: Նրանք իրենց խոսքում կենդանական աշխարհի տարբեր ներկայացուցիչների (**gorilla, dog, snail, bird, swan, goose, tiger, serpent, snake, fly, monkey** և այլն) միջոցով ստեղծում են կոնկրետ կերպարներ (**hairy as a gorilla; agile like a monkey; as funny as a**

monkey; nose was wet, like a dog's; slow as a snail; happy like a bird): Այս համեմատությունները նպաստում են իմաստի ընկալմանը և ուժեղացնում ազդեցությունը լսողի վրա: Այսպիսի համեմատությունների օգտագործումը որոշում է ոչ միայն գրույցի բովանդակությունը, այլև խոսողի աշխարհայացքը, սեռը, հանրամշակութային արժեքները, կարծրատիպերը: Խոսողը փորձում է հաղորդել իր անկայուն հոգեվիճակը: Վերը բերված համեմատությունները ոչ միայն ցույց են տալիս կանանց վերաբերմունքը կենդանական աշխարհի նկատմամբ, այլև նրանց յուրահատուկ պատկերավոր մտածողությունը:

Ընդհանուր առմամբ **cow, pussy, bitch, monkey, animal, bull, (dead) cat, dog, sheep, hen, cock, chicken, horse, bee** բառերը օգտագործվում են փոխաբերական իմաստով և օգնում են երկու սեռին էլ այլաբանորեն գնահատել մարդու դրական ու բացասական հատկանիշները և փոխանցել իրենց հուզական վերաբերմունքը: Կենդանուն բնորոշ հատկանիշների վրա հիմնված փոխաբերությունները հաճախ գենդերային փոխաբերությունների աղբյուր են, որոնք օգտագործվում են տղամարդկանց և կանանց կերպարները բնութագրելու համար: Միանգամից նշենք, որ անգլիական երգիծական խոսույթում ամենամեծ թվով փոխաբերությունների աղբյուրը կենդանիների անվանումներն են:

Դիտարկենք գենդերային փոխաբերությունների առավել ակնառու օրինակներ՝ առանձնացնելով այն հատկանիշները, որոնք արտահայտում են դրանք.

13) A bus stops and two Italian men get on. They seat themselves and engage in animated conversation. The lady sitting behind them ignores their conversation at first, but her attention

*is galvanized when she hears one of the men say the following: “Emma come first. Den I come. Den two asses come together. I come once-a-more. Two asses, they come together again. I come again and pee twice. Den I come one lasta time.” “You **foul-mouthed swine, ugly-bad dog**” retorted the lady indignantly. “In this country we don’t talk about our sex lives in public!” “Hey, coola down **monkey** ” said the man. “Who talking abouta sexa? Imma justa tellun my frienda how to spella “Mississippi”!*

<<http://www.free-funny-jokes.com/talking-italian.html>>

Մարդուն վերաբերող վերը նշված փոխաբերությունները օգտագործելիս տվյալ կենդանիների (**swine, dog, monkey**) հատկանիշները (բացասական կամ դրական) փոխանցվում են մարդուն: Համապատասխան ներգործության ենթարկելով հաղորդակրին՝ փոխաբերությունները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ միտքն առավելագույնս արտահայտիչ ու հակիրճ ներկայացնելու համար: Անգլիական երգիծական խոսույթում օգտագործված փոխաբերությունների զգալի մասը գենդերային առումով չեզոք է և կարող է բնութագրել ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց հատկանիշները: Սակայն գործածվում են նաև այնպիսի փոխաբերություններ, որոնք բնութագրում են «զուտ տղամարդկանց» կամ «զուտ կանանց» բնորոշ հատկանիշներ՝ ընդ որում ձևավորելով գենդերային առումով տարբեր կերպարներ, օրինակ՝ անփույթ, գեր կանանց **կովի (cow)** հետ համեմատելը, վատաբարո տղամարդկանց **շան (dog)** հետ համեմատելը և այլն: Անմիջականորեն ազդելով տվյալ հասարակության մշակույթում տղամարդկանց և կանանց կերպարների ձևավորման վրա՝ նշյալ ժանրը ազդեցություն է գործում ոչ միայն լեզվի, այլև տղամարդկանց և կա-

նանց կերպարների բնութագրման, կարծրատիպերի և հասարակական նորմերի ձևավորման վրա՝ առաջարկելով տղամարդկանց և կանանց գենդերային նոր կերպարներ և դերեր: Փոխաբերությունները հագեցնում են անեկդոտի տեքստը, ինչը թույլ է տալիս արդյունավետորեն ներգործել տեքստի հասցեատիրոջ ենթագիտակցության և նրա հետագա գործողությունների վրա: Քանի որ փոխաբերական արտահայտությունը օժտված է ընդգծված արտահայտչականությամբ և գնահատողականությամբ, այն տեքստին հաղորդում է հուզականություն, ինչը կարևոր տարր է լսողի ենթագիտակցության վրա ներգործելու և կարծիք ձևավորելու համար: Անեկդոտներում գենդերային փոխաբերությունների աղբյուր են դառնում կյանքում տղամարդկանց և կանանց շրջապատող օբյեկտները:

Կանանց և տղամարդկանց կոնֆլիկտային շփումներում գոեհիկ բառապաշարը որպես խոսքային ագրեսիա գործածելը վկայում է ավելի շուտ հաղորդակցվողների հուզական անգսպության, իրավիճակին և իրենց հույզերին տիրապետելու անկարողության մասին: Իսկ գոեհիկ բառապաշարի նպատակադրված գործածումը ոչ կոնֆլիկտային շփումներում վկայում է հայիոյախոսության նկատմամբ ավելի մեծ չափի հանդուրժողականության, երբեմն նաև դրան լիակատար հավանություն տալու մասին: Վերլուծելով հույզերը, որոնց արտահայտման համար անգլերենի լեզվակիրները թույլ են տալիս գոեհիկախոսություն, մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել գոեհիկ բառապաշարի գործառական առանձնահատկություններին:

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ եթե հարաբերականորեն վերջերս գոեհիկ բառապաշարը առավելապես կոպտություն արտահայտելու միջոց էր, ապա այսօր այն թույլատրելի է քաղաքավարի շփումներում որպես մտերմության

նագմավարություն և ծառայում է որպես միջանձնային փոխհամագործակցության միջոց ոչ կոնֆլիկտային շփումներում: Այն օգտագործվում է զրուցակցին քաջալերելու և աջակցելու նպատակով, նրանց միջև առկա տարածությունը կրճատելու, շփման ոչ պաշտոնական իրավիճակ ստեղծելու, ինչպես նաև երգիծական տպավորություն գործելու համար: Դա առավելապես բնորոշ է անգլիական լեզվամշակույթին: Մեր վիճակագրական տվյալները վկայում են, որ անգլիացիները ավելի մեծ հանդուրժողականություն են ցուցաբերում հայիոյախոսությանը ոչ կոնֆլիկտային շփումներում և ընկալում են այն որպես հաջողված լեզվական արտահայտչամիջոց: Գոեհիկ բառապաշարը նաև լայն տարածում է գտել կրթված անգլիական հասարակության շրջանում: Գոեհիկ բառապաշարի օգտագործման և գործառության ոլորտի ընդլայնումը վկայում է հաղորդակցային արժեքների վերագնահատման և լեզվի կշռի փոփոխությունների մասին: Եթե դեռ հարաբերականորեն վերջերս լեզվական վարքագծի չափանիշը հասարակության կրթված շերտերի շփվելածնն էր, ապա այսօր ավելի ու ավելի հանրամատչելի է դառնում «ներքևների» լեզուն, այսինքն՝ հաղորդակցային փոփոխություններն ընթանում են «ներքևից վերև» ուղղությամբ: Գոեհկախոսությունը դարձել է լայնորեն թույլատրելի երևույթ անգլիական մշակույթում:

Հարկ է նշել նաև, որ կնոջ խոսքում հուզագնահատողական **կոչական բառերի** քանակն զգալիորեն մեծ է: Կանանց կողմից գործածվող դիմելածները որակական առումով աչքի են ընկնում մեծ բազմազանությամբ՝ *sweetheart, honey, darling, silly, little thing, pompous old ass, sweetie pie, old cow, poor lamb, poor baby, silly little fool, old donkey* և այլն: Հասցեագրման համանման միջոցներ կանանց կողմից կիրառվում են

թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց դիմելիս, եթե հաղորդակցությունը կատարվում է «կենցաղային» մակարդակում:

Օրինակ՝

14) *A Rich old man, who inherited all his money from his father, one day asks his young wife:*

*“**Honey**, would you still have married me if my father didn’t leave me with all this money?*

*His wife smiles gently and answers: “Sure **honey**, you know I would marry you no matter who gave you the money”*

<<http://www.hiren.info/funstuff/funny-jokes/if-i-wasnt-rich>>

Տղամարդկանց խոսքին բնորոշ դիմելաձևերն այնքան էլ բազմազան չեն: Վերջիններս կնոջ հետ խոսելիս բավարարվում են հետևյալ տարբերակներով՝ **dear, darling, dearest, honey**:

15) *One night at the dinner table, the wife commented, “When we were first married, you took the small piece of steak and gave me the larger. Now you take the large one and leave me the smaller; You don’t love me any more...”*

*“Nonsense, **darling**,” replied the husband, “you just cook better now.”*

<<http://jokstop.com/love/0ay>>

16) *A very elderly couple is having an elegant dinner to celebrate their 75th wedding anniversary. The old man leans forward and says softly to his wife, “**Dear**, there is something that I must ask you. It has always bothered me that our tenth child never quite looked like the rest of our children. Now I want to*

assure you that these 75 years have been the most wonderful experience I could have ever hoped for, and your answer cannot take that all away. But, I must know, did he have a different father?"

The wife drops her head, unable to look her husband in the eye, she paused for a moment and then confessed. "Yes. Yes he did."

The old man is very shaken, the reality of what his wife was admitting hit him harder than he had expected. With a tear in his eye he asks, "Who? Who was he? Who was the father?" Again, the old woman drops her head, saying nothing at first as she tried to muster the courage to tell the truth to her husband. Then, finally, she says: "You."

<<http://jokstop.com/13>>

Սակայն եթե շփումը տեղի է ունենում բավականին մտերմիկ հարաբերություններ ունեցող տղամարդու և կնոջ միջև, ապա տղամարդկանց կողմից դիմելու ձևերն ավելի բազմազան են դառնում՝ ***my dear girl, my little girl, lassie, sweetie, duckie, bugabear, honeybun, honeysweet*** և այլն: Իսկ կանանց խոսքում հանդիպում ենք բառեր փաղաքշական ածանցներով, օրինակ՝ ***dearie, doggie, kitty, horsie, sweetie, babykins, chuckie, islet, lambkin, boykin, spherule, animacule, kitcenette, balconette, hillock, paddock, bullock, catling, manling, firstling*** և այլն: Կանանց հատուկ է նաև ***փոքրացուցիչ-փաղաքշական բառերի*** կիրառումը: Նման բառերը բնորոշ են երեխաների (հատկապես փոքր տարիքի) հետ մեծերի զրույցներին, սակայն կանանց խոսքում նշյալ հատկությունը բավականին վառ է արտահայտվում: Փոքրացուցիչ-փաղաքշական բառերը կանանց խոսքում հիմնավորապես հաստատվում են

դեռ մանկության շրջանից՝ աղջիկ-մայրիկ խաղի ընթացքում, մանուկների, ընտանի կենդանիների հետ շփումների ժամանակ և այլն: Ակնհայտորեն այս երևույթը արտացոլում է արտահայտչամիջոցներն ընդլայնելու կանանց պահանջմունքը՝ քրնքշանքի, փաղաքշանքի տարբեր նրբերանգներ փոխանցելու, հուզագնահատողական հատկանիշի արտահայտման աստիճանը մեծացնելու, առարկայի բնութագրական առանձնահատկությունները շեշտելու, ինչպես նաև սեփական վերաբերմունքը դրա նկատմամբ արտահայտելու համար: Կանանց խոսքում հանդիպող փոքրացուցիչ-փաղաքշական միավորները մեծ մասամբ որպես բառակազմական ձևույթներ ունենում են հետևյալ ածանցները՝ *ock; en; sie/-sies/-sy; ling; kin; cule* և այլն: Կանայք հաճախ օգտագործում են փոքրացուցիչ-փաղաքշական բառեր շրջապատող աշխարհի հետ իրենց բազմակերպ հարաբերությունները հուզականորեն հաղորդելու համար:

Եթե խոսենք բառային կազմի, իմաստաբանական դաշտերի և զուգորդական շարքերի մասին, ապա ելնելով այն բանից, որ կինը կենտրոնացած է իր ներաշխարհի վրա, նրա խոսքի բառային կազմում ավելի շատ են զգացմունքներ, հույզեր արտահայտող բառերը, նա ավելի հաճախ է կիրառում մարդու հուզական-հոգեբանական վիճակը բնութագրող արտահայտություններ: Այս հանգամանքով է նաև պայմանավորված կանանց խոսքում փոխաբերությունների առատությունը: Իր ծավալով «կնոջ» բառապաշարը հարաբերականորեն փոքր է: Կանայք օգտագործում են բառարանի հիմնական բառապաշարը, այսինքն՝ խոսքում ավելի հաճախ հանդիպող բառային միավորները, մինչդեռ տղամարդիկ ավելի շատ են գործածում ***նորաբանություններ***՝ ի զորու չլինելով գտնել դրանց փոխարինող ավելի գործածական բառերն ու արտահայտությունները:

Անգլիական երգիծական խոսույթում տղամարդիկ ավելի ընկալունակ են լեզվական նոր փաստերի նկատմամբ, քան կանայք: Նրանք գործածում են ավելի շատ նորաբանություններ (օրինակ՝ **megadual** (*totally awesome*), **pot-head** (*someone who smokes marijuana habitually*), **get wrecked** (**get rocked, get banged out, get dropped**) (*something to threaten someone with or to say after you wreck someone*), **telebanking** (*telephone banking, Internet banking*), **dial-a-taxi dial-a-meal** (*order transport, meal*), **get stoned** (*to become very drunk or high on some drug*), **teleport** (*transport by dematerializing at one point and assembling at another*), **dude** (*an informal form of address for a man; a man who is much concerned with his dress and appearance*), **kidvid** (*television for children*); **jive** (*n. deceive statements or beliefs that are untrue or make no sense; v. talk misleadingly or insincerely*), **acid-head** (*someone who takes LSD*) և այլն), ինչպես նաև բառեր տերմինաբանական և մասնագիտական բառապաշարից (**interlingual** (*a written communication in a second language having the same meaning as the written communication in a first language*), **homophobia** (*prejudice against fear or dislike of homosexual people and homosexuality*), **telemonitory systems** (*for treating patients at a distance; they are remote phone based systems that are placed in the home of the patient*), **biometric eye-scanner** (*is device that scans certain physical characteristics and allows entry into computers*) և այլն): Օրինակ՝

17) A naive young man found himself in the wrong part of town late at night, and got attacked by a gang of muggers. He put up a terrific fight but was eventually overcome and lay bleeding on the ground. When the muggers went through his pockets, all they found was a handful of loose change.

“You are just jiving me, man. You went through all that just to protect a few coins?” they asked amazed.

“Oh I see,” said the man. “For a while I thought you were after the J500 hidden in my shoe.”

(Sharpe, 2004, 43)

Բերված օրինակներում ***“You are just jiving me, man”*** արտահայտության մեջ օգտագործվել է տղամարդու կողմից ***jive*** նորաբանությունը, որը կատարում է հաղորդակցային և առնշանակային գործառույթներ: Ինչպես ցույց է տալիս երգիծական խոսույթի վերլուծությունը, տղամարդկանց խոսքում նրանց օգտագործած նորաբանությունների «զինանոցը» բավականին բազմազան է:

Ուսումնասիրության են ենթարկվել տղամարդկանց և կանանց հուզավիճակներն արտահայտող բազմաթիվ ***ուժգնացնող բառեր***. գենդերային առումով դրանք գերակշռում են կանանց խոսքում: Կանանց խոսքին հատուկ ոճական բնութագրերից է զգացմունքների չափազանցման միտումը: Դա դրսևորվում է ***incredible, crazy, creepy, terrible*** ուժգնացնող բառերի լայն գործածությամբ: Բառօգտագործման այդ առանձնահատկությունը հատկապես նկատելի է գնահատողական դատողություններ անելիս: Այն հստակ երևում է նաև կանանց բնորոշ կարծրատիպային երկխոսության արձագանքներում: Արտահայտչականության ծայրահեղ ձևերի դիմելը կանանց խոսքի բնորոշ գծերից է:

Ուժգնացնող բառերը հնարավորություն են տալիս հույզերին դուրս գալու առաջին պլան: Առանց հուզական լիցքերին ուժգնություն հաղորդող լեզվական միավորների (եղանակավորող բառերի, մասնիկների և այլնի) կնվազեին խոսակցական

լեզվի հուզականությունն ու անկաշկանդությունը: Հույզերը ստվերում են իմաստային նրբերանգները. որքան բարձր է դրսևորման ուժգնությունը, այնքան անորոշ է դրա տրամաբանական իմաստը:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում, առավել հաճախ կանանց խոսքում, գործածվում են ուժեղացնող ածականներ՝ **admirable, colossal, enormous, senseless, beautiful, considerable, terrific, all-important, extraordinary, dearest, earnest, fondest, heaviest, highest, hopeless, fantastic, catastrophic, exclusive, hilarious, fabulous, furious, rough, wonderful, monstrous, boundless, extraordinary, extreme** և այլն: Օրինակ՝

18) *A woman meets with her lover, who is also her husband's best friend.*

They make love for hours. Afterwards, as they lie in bed, the phone rings. Since it's the woman's house, she picks up the receiver. The best friend listens, only hearing her side of the conversation:

*"Hello? Oh, hi... I'm so glad that you called... Really? That's wonderful... Well, I'm happy to hear you're having **such a great time**... Oh, that sounds **terrific**... Love you, too. OK. Bye-bye."*

She hangs up the telephone and her lover asks, "Who was that?"

*"Oh," she replies, "That was my husband telling me about **the wonderful time** he's having on his fishing trip with you."*

<<http://jokes.cc.com/funny-marriage-jokes/7ra4ct/the-husband-s-best-friend>>

19) One day in the Garden of Eden,
Eve calls out to God...

"Lord, I have a problem!"

"What's the problem, Eve?"

*"Lord, I know you've created me and have provided this beautiful garden and all of these **wonderful animals**, and that **hilarious comedic snake**, but I'm just not happy."*

"Why is that, Eve?" came the reply from above.

"Lord, I am lonely. And I'm sick to death of apples."

"Well, Eve, in that case, I have a solution. I shall create a man for you."

*"What's a 'man', Lord? "This man will be a flawed creature, with **aggressive tendencies**, an **enormous ego** and an inability to empathise or listen to you properly. All in all, he'll give you a hard time. But, he'll be bigger, faster and more muscular than you. He'll also need your advice to think properly. He'll be **really good** at fighting and kicking a ball about, hunting fleet-footed ruminants, and not altogether bad in the sack."*

"Sounds great," says Eve, with an ironically raised eyebrow.

"Yeah, well... He's better than a poke in the eye with a burnt stick. But, you can have him on one condition."

"What's that, Lord?"

"You'll have to let him believe that I made him first."

<<http://www.funs.co.uk/fs/s24.html>>

Առավել գործածական են **great, so, so much/many, pretty, really, too, too much/many, quite** ուժգնացնող բառերը: Նախադասության հուզարտահայտչական ձևավորումը կախված է հուզավիճակի աստիճանից ու լարվածությունից: Նախադասու-

թյան մեջ մեկից ավելի ուժգնացնող բառերի առկայությունը վկայում է մարդու հուզավիճակի, ապրումների խորության մասին: Կանայք տղամարդկանցից առավել հաճախ են գործածում **“so”** և **“such”** մասնիկները՝ իրենց հուզազնահատողական արտահայտությունները ուժգնացնելու նպատակով: Ինչպես արդեն վերը նշել ենք, կինը ավելի շատ է կենտրոնացած իր ներաշխարհի վրա, քան տղամարդը, որով էլ պայմանավորված է նրա կողմից ավելի շատ զգացմունքներ, հույզեր արտահայտող բառերի, մասնիկների, մարդու հուզական-հոգեբանական վիճակն արտահայտող բառակապակցությունների օգտագործումը: **Ջայրույթի** և **ուրախության** մեր դիտարկած հուզավիճակներում երկու սեռի ներկայացուցիչներն էլ օգտագործում են մեծ թվով ուժգնացնող բառեր: Ուժգնացնող բառերն օգնում են խոսողին արտահայտել ոչ միայն մտքերի ու զգացմունքների նրբերանգները, այլև կառուցել խոսքը, լրացնել դադարները, որոնք անհրաժեշտ են ճիշտ բառը գտնելու համար: Բացի դրանից՝ անգլիական երգիծական խոսույթում ուժգնացնող բառերը այլ բառերի, ինչպես նաև ամբողջ արտահայտության նշանակությունների մեջ ներառում են լրացուցիչ իմաստային նրբերանգներ՝ առանձնացնելով, սահմանափակելով կամ ուժեղացնելով դրանք:

Եթե անգլիական երգիծական խոսույթում դիտարկենք կանանց և տղամարդկանց խոսքի ձևաբանական կողմը, ապա կարելի է նկատել շատ ուշագրավ առանձնահատկություններ: Լեզվական նյութի վերլուծությամբ պարզվում է, որ անգլիական երգիծական խոսույթում տղամարդիկ ավելի շատ են օգտագործում **բայեր**, իսկ կանայք՝ **ածականներ** և **մակբայներ**: Ստորև ներկայացվող «կենցաղային» անեկդոտի օրինակում կանայք իրենց հույզերը հաղորդում են **wonderful, romantic, awful**

ածականների օգնությանը (*The honeymoon was so wonderful. So romantic...; What could be so awful?*): Նմանօրինակ ածականները կանանց խոսքում արտահայտում են պասիվ հուզավիճակներ, այլ ոչ թե ակտիվ հույզեր: Օրինակ՝

20) *Rupert and Elaine, young couple, got married and went happily on their honeymoon.*

When they got back, Elaine immediately “phoned her mother and her mother obviously asked, “How was the honeymoon, dearest?”

*“Oh, Ma,” she replied, “the honeymoon was **so wonderful. So romantic...**”*

Then Elaine burst out crying. “But, Ma, as soon as we returned home Rupert started using the most ghastly language... saying things I’ve never heard before! I mean, all these awful 4-letter words! You’ve got to come get me and take me home.... Please Ma.”

*“Calm down, Elaine!,” said her mother, “Tell me, what could be **so awful?** What 4-letter words?”*

Still sobbing, Elaine whispered, “Oh, Ma...words like dust, wash, cook, and iron.”

<http://www.guy-sports.com/jokes/good_jokes.htm>

Ներկայացվող «կենցաղային» անեկդոտի օրինակում օգտագործվում է **“so”** մասնիկը՝ խոսողի հուզազնահատողական վիճակը ուժգնացնելու համար, որը բնորոշ է կանանց գնահատողական խոսքին: **“Awful, romantic”** ածականները **“so”** ուժգնացնող բառի համակցությամբ ստանում են դրական և բացասական գնահատողական իմաստ՝ արտահայտելով խոս-

ղի հիացմունքը, ցնծությունը և զգվանքը: Մինչդեռ տղամարդկանց խոսքում նկատվում է հուզական բայերի կիրառություն, որոնք, ընդհակառակը, ենթադրում են սուբյեկտի ավելի ակտիվ դեր, օրինակ՝ **agitate, amaze, hurt, surprise, astonish** և այլն:

Կանանց և տղամարդկանց խոսքի տարբերությունների ուսումնասիրության համար բառապաշարի վերլուծությունը կարող է շատ արդյունավետ լինել: Բառապաշարի ընտրությունը, մտքի շարադրանքը շատ անհատական են: Արտահայտչամիջոցները ստեղծվում են ընդհանուր գործածական բառերի միջոցով և ծառայում են մեկ նպատակի՝ մարդու գաղափարների առավել ճշգրիտ արտահայտմանը: Անգլիական երգիծական խոսույթում մի շարք ածականներ և գոյականներ բավականին հաճախ են օգտագործվում կանանց խոսքում՝ **mountains, sun, sky, green, greenery, yellow, cool, clean, clear, white, blue, pale, glisten, glitter, gleam, brilliant, radiant, gold, golden** և այլն: Ըստ իմաստաբանական դասակարգման՝ կարելի է առանձնացնել այս բառերի հետևյալ հասկացությունները՝

- հավիտենականություն՝ **sun, sky, mountain,**
- երիտասարդություն, կյանք՝ **green, greenery, yellow,**
- մաքրություն՝ **cool, clean, clear, white, blue, pale,**
- գեղեցկություն՝ **glisten, glitter, gleam, brilliant, radiant, gold, golden:**

Կանանց խոսքում նրանց զգացմունքներն ու ապրումները բացահայտվում են բնության լավ ծանոթ երևույթների հակադրության միջոցով: Այդպիսի համեմատությունների գլխավոր նպատակն է փոխանցել ներքին հոգեվիճակը: Մարդը և բնությունը մի ամբողջություն են, որը և հիմք է ստեղծում հակադրելու գործունեությունը, վարքը, խառնվածքը, մարդու կապը բնության հետ: Կարելի է նաև նշել, որ կանանց կողմից օգտագործ-

ված բառերի մեծ մասը համընկնում է մարդու հոգեկան գործունեության հետ: Նույնիսկ այն դեպքերում, երբ օգտագործվում են ձև, գույն, չափ հատկանշող որակական ածականներ, խոսողը լրացնում է դրանք լրացուցիչ իմաստներով, և այսպես թե այնպես դա նկարագրում է մարդու հուզավիճակը: Կանայք ներկայացնում են իրենց ներաշխարհը շատ մանրակրկիտ՝ չառանձնացնելով այն հասարակական կյանքից և կոնկրետ ժամանակից:

Տղամարդկանց խոսքին ավելի բնորոշ են որոշակիությունն ու տեղեկատվայնությունը, վերլուծական դիտարկումներն ու քննադատական դիտողությունները: Եթե կանանց խոսքում քննադատությունը վերացական կամ ընդհանրական բնույթի է, ապա տղամարդկանց քննադատությունը հիմնականում որոշակի է, հասցեական և անձնավորված: Բացի դրանից՝ պետք է նշել, որ տղամարդիկ նախընտրում են ավելի ստանդարտ ու կարճ բնութագրություններ՝ կոնֆլիկտային իրավիճակներում բացասական հույզեր փոխանցելու համար: Կանայք հիմնականում օգտագործում են այդ միջոցները՝ դրական հույզերը սաստկացնելու, ասվածի նկատմամբ իրենց հեգնական վերաբերմունքն արտահայտելու համար, նրանց արտահայտությունները երկար են և բառաշատ:

Ընդհանուր առմամբ անգլիական երգիծական խոսույթում կանայք և տղամարդիկ մոտավորապես նույն հարաբերակցությամբ գործածում են անկատարի բայական ձևերը: Ընդ որում, դրանք ավելի հաճախ կիրառում են կանայք, իսկ կատարյալին՝ տղամարդիկ, ինչը համապատասխանում է տղամարդկանց վարքագծային բնութագրերին. բայի կատարյալ ձևի գլխավոր հատկանիշը նպատակն է, արդյունքը, ամբողջականությունը: Ուսումնասիրվող անեկդոտների օրինակները ապացուցում են

այն փաստը, որ տղամարդիկ օժտված են գործողությունները համեմատելու կարողությամբ: Այդպիսի համեմատություններ օգտագործելիս տղամարդկանց համար կարևոր է, թե լսողը ինչպես է ըմբռնում կերպարների գործողությունները:

Երգիծական խոսույթում կանանց խոսքը աչքի է ընկնում **մակբայ+մակբայ կառույցի** հաճախակի գործածությամբ: Իրենց խոսքի քաղաքավարի բնույթից ելնելով՝ կանայք օգտագործում են այսպես կոչված երկակի մոդալականության միջոցներ (**մոդալ բայ+մակբայ**), օրինակ՝ ***I was wondering if you could possibly just do me a small favour*** և այլն:

Անգլիական երգիծական խոսույթում զանազան մոդալ բայերի գործածումը ևս էականորեն տարբերվում է տղամարդկանց և կանանց խոսքում: Տղամարդիկ նախընտրում են **“can, must”** բայերը, որոնք արտահայտում են ֆիզիկական կարողություն, հնարավորություն, անհրաժեշտություն, իսկ կանայք՝ **“may, should, ought to”** բայերը, որոնք ունեն գործողություն կատարելու հավանականության և բարոյական անհրաժեշտության, պարտավորության իմաստ: Հատկապես կանանց խոսքում լեզվի մոդալ միջոցների գերակայությունը կարելի է բացատրել ընդհանուր առմամբ կանանց խոսքի անվստահության, անորոշությամբ և անվճռականությամբ:

Տղամարդկանց նախադասությունները ավելի հաճախ են սկսվում **“I”** դերանունով (ըստ մեր դիտարկումների՝ կանանց մոտ այդ անձնական դերանունը գործածվում է գրեթե երկու անգամ քիչ, նրանք ավելի հաճախ օգտագործում են **“we”** անձնական և **“this”, “that”, “these”, “those”** ցուցական դերանունները): Առաջին դեմքի անձնական դերանունը մատնանշում է հենց իրեն՝ խոսողին: Նման ընտրությունը լիովին համապատասխանում է այն գերակայող կարծրատիպին, որ տղամարդը չպետք է լինի թույլ և կախյալ: Լեզվաբանական դիտարկումնե-

րը համընկնում են հոգեբանների այն կանխավարկածին, որ կնոջ «*ego*»-ի սահմաններն ավելի քիչ են հստակեցված ու պատճառաբանված (Pervin, John, 1997):

Մարդու խոսքը այնպիսի միջոցների կարիք ունի, որոնք կկարողանան անմիջականորեն արտահայտել հույզեր, արտացոլել վերաբերմունք արտաքին աշխարհի երևույթների նկատմամբ: Խոսողի հուզավիճակն արտահայտող առավել հաճախադեպ միջոցներից են **ձայնարկությունները**, որոնք կարելի է սահմանել որպես հուզական բառապաշարի մասնիկներ: Դրանք նախադասության մեջ հարաբերականորեն օժանդակ դեր ունեն, այսինքն՝ կարելի է և չօգտագործել ձայնարկությունները առանց խաթարելու նախադասության կամ արտահայտության ընդհանուր իմաստը: Ձայնարկությունները շարահյուսորեն կապված չեն նախադասության այլ մասերի հետ: Բազմաթիվ հուզական բառեր, և հատկապես ձայնարկությունները, հույզեր են արտահայտում ամենաընդհանուր գծերով՝ անգամ չընդգծելով դրա դրական կամ բացասական բնույթը: Օրինակ՝ «*Oh*»-ը կարող է արտահայտել և՛ ուրախություն, և՛ թախիծ, և՛ բազմաթիվ այլ հույզեր:

Անգամ մեկ ձայնարկության առկայությունը հուզականություն է հաղորդում ամբողջ արտահայտությանը: Ընդհանուր առմամբ ձայնարկությունների միջոցով հաղորդվում է արտահայտության ողջ բնեղանգը: Դրանց նշանակությունը պարունակում է ամբողջ արտահայտության հիմնական միտքը:

Ձայնարկություններն իրենց գործածության համատեքստն ունեն, որը հանդես է գալիս ձայնարկության իմաստն արտահայտող հաղորդակցային վերաբերյալի դերում: Համատեքստը ներկայացնում է հուզավիճակ, որը տարբեր միջոցներով իրական կենսական իրավիճակների արտահայտման տարբերակ է:

Ձայնարկություններ պարունակող արտահայտություններում տեղ գտած հույզերը ճիշտ մեկնաբանելու համար վճռորոշ նշանակություն ունի համատեքստը, որում արտահայտվում են սուբյեկտի վերապրած զանազան հույզերը: Ձայնարկությունները չունեն առարկայական նշանակություն, իսկ հուզական նշանակությունը կախված է խոսքային իրադրությունից: Դրանք գենդերային առումով որոշարկված են: Ձայնարկությունների գենդերային նշույթավորվածությունը նկատելի է ձայնարկությունների խոսույթային կիրառման և լեզվական անձի գենդերային բնութագրերի միջև: Անգլիական «կենցաղային» անեկդոտներում կանաչ իրենց խոսքում ավելի հաճախ են գործածում ձայնարկություններ: Մասնավորապես հաճախադեպ են ***alas, dear God, Good gracious, God, oh God, oh my God, hush, my word, oh, oh dear, oh my dear me, oh no, thank goodness, Oh Jesus*** ձայնարկությունների կիրառությունները: Այն ձայնարկությունները, որոնց օգնությամբ դիմում են Աստծուն և հիշատակում նրա անունը, կարծրատիպային ընկալմամբ վերագրվում են կանանց և արտահայտում են ***վախ, երկյուղ, սարսափ***: Օրինակ՝

21) *While examining the body of Mr. Schwartz, a mortician notices that Schwartz has the largest penis he has ever seen.*

“I’m sorry, Mr. Schwartz,” says the mortician, “But I can’t send you to be cremated with a tremendously huge penis like this. It has to be saved for posterity.”

The mortician removes the penis, places it in a jar and puts the jar in his briefcase. When he gets home, he decides to show it to his wife. “I have something to show you that you won’t believe,” he says, removing the jar from his briefcase.

“Oh my God!” she screams, “Schwartz is dead!”

<<http://jokes.cc.com/funny-dark-humor/d6vjuu/the-mortician-s-big-discovery>>

Սակայն նման ձայնարկությունները (**By God; Oh God**) տարբեր իմաստներով են գործածվում. տղամարդկանց դեպքում դա առավելապես **զարմանքի, խնդրանքի, զայրույթի ու նյարդայնության** իրավիճակ է: Օրինակ՝

22) *The poor man was in great difficulties. His business was failing and it looked as if he was facing bankruptcy. As a last resort he popped into the local church and kneeling down he prayed fervently.*

“Oh God, please don’t let this happen to me, please let me win the lottery. I wish I could win the lottery.”

But on Saturday night, he had no luck. The following week, the situation got worse. The man lost his house and all his possessions, so once again he went into church and prayed desperately.

“Oh please, please I beg you. I wish I could win the lottery.”

But on Saturday, he had no luck. On the following Monday, his wife and children left him and he was now completely on his own. He ran into church, got down on his knees and pleaded, “Oh God, everything has gone, I have nothing left. Have pity on me, I beg you. Why won’t you help me win the lottery?”

*At that moment, there was a tremendous thunderclap, a bright flashing light and God boomed out, “You daft bugger, you could at least give yourself a sporting chance and buy a fucking ticket!” (**խնդրանք, զայրույթ**)*

(Sharpe, 2004, 297-298)

Վերը բերված անեկդոտում հերոսի խոսքում նկատվում է ստորադասական եղանակի կառույց (*I wish I could win the lottery*), որը բավականին տարածված երևույթ է տղամարդկանց խոսքում:

Ինչ վերաբերում է ձայնարկությունների կիրառությանը տղամարդկանց խոսքում, ապա այստեղ ավելի հաճախ գործածվում են հետևյալ ձայնարկությունները՝ *ah, aha, aw, ay, aye, bah, by God, oh damn, God damn, devil, good Lord, gosh, ha, By jove, heaven knows, hell, hey, hush, hmmm, oh hell, yeah*: Օրինակ՝

23) *A guy goes to see his doctor, and the doctor says, "Well, I'm afraid you have six weeks to live." The guy says, "Oh damn, well what should I do doctor?" The doctor tells him, "You should take a mud bath once a day for the next six weeks," and the guy asks, "Why? Is that supposed to help?" and the doctor says, "No, but it'll get you used to being in the ground."*

[<http://www.jokesoftheday.net/jokes-archive/2015/01/05/>](http://www.jokesoftheday.net/jokes-archive/2015/01/05/)

Անգլիական երգիծական խոսույթում տղամարդիկ գործածում են մեծ թվով ձայնարկություններ իրենց հույզերը վերարտադրելու նպատակով: Դրանք հաճույքի, ուրախության, զարմանքի, զայրույթի, հակակրանքի և ատելության հույզերն են: Օրինակ՝

24) *One day Little Jonnie says to his father: "I want to get married."*

Father: Oh, so do you have someone special in your mind?

Johnny: Yes...Grandma

Father: What? There is a problem now; you want to marry my Mother?

Johnny: Why not? You married my mother. (զարմանք)

<<http://www.ajokeaday.com/clasificacion.asp?ID=48&Pagina=10>>

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում իգական սեռի գործող անձինք օգտագործում են մեծ թվով ձայնարկություններ՝ տխրության, վախի, հիացմունքի և զղջման հոյզերն արտահայտելու համար: Օրինակ՝

25) Mrs. Culpepper was almost in tears. “Oh Marie,” she said to her maid, “To my mind I have reason to suspect that my husband is having an affair with his secretary.”

“You see, I don’t believe it for one minute!” Marie snapped.

“I suppose, you’re just saying that to make me jealous !!

(տխրություն)

<<http://www.touchinglovestories.com/lovestory120.htm>>

26) A woman who died found herself standing outside the Pearly Gates, being greeted by St. Peter.

She asked him, “Oh, is this place what I really think it is? It’s so beautiful.

Did I really make it to heaven?”

To which St. Peter replied, “Yes, my dear, these are the Gates to Heaven. But you must do one more thing before you can enter.” The woman was very excited, and asked of St. Peter what she must do to pass through the gates. “Spell a word,” St. Peter replied. “What word?” she asked.

*“Any word,” answered St. Peter. “It’s your choice.” The woman promptly replied, “Then the word I will **probably** spell is love.L-o-v-e.”*

St. Peter congratulated her on her good fortune to have made it to Heaven, and asked her if she would mind taking his place at the gates for a few minutes while he went to the bathroom.

“I’d be honored,” she said, “but what should I do if someone comes while you are gone?”

St. Peter reassured her, and instructed the woman to simply have any newcomers to the Pearly Gates to spell a word as she had done.

So the woman is left sitting in St. Peter’s chair and watching the beautiful angels soaring around her when a man approaches the gates. She realizes it is her loser husband.

“What happened?” she cried, “Why are you here?”

Her husband stared at her for a moment, then said, “I was so drunk when I left your funeral, I was in an accident. And now I am here? Did I really make it to Heaven?”

*To which the woman replied, “Not yet. **You see**, you must spell a word first.”*

“What word?” he asked.

*The woman responded, “Czechoslovakia.” (**հիացմունք**)*

<<http://www.ajokeaday.com/Clasificacion.asp?ID=48&Pagina=5>>

Կանանց խոսք ներկայացնող բերված հատվածներում ակնհայտ է ձայնարկությունների քանակը: Կանանց խոսքում հանդիպում են զանազան միջանկյալ բառեր և կառույցներ, որոնք արտահայտում են վստահության տարբեր աստիճաններ՝ **to my mind, you see, I suppose, I think, probably, possibly** և այլն:

Կարելի է նաև նշել, թե միևնույն ծայնարկությունը ինչպիսի տարբեր «հանձնարարականներ» է կատարում տղամարդկանց և կանանց խոսքում: Այլ կերպ ասած՝ միևնույն ծայնարկությունը տղամարդու և կնոջ խոսքում կարող է ունենալ իմաստային տարբեր դրսևորումներ: Տղամարդկանց և կանանց խոսքում **“oh”** ծայնարկությունը կիրառելիս ի հայտ են գալիս որոշակի տարբերություններ. եթե տղամարդկանց խոսքում այն արտահայտում է **զայրույթ**, ապա կանանց խոսքում՝ **զարմանք, տխրություն, ուրախություն, վախ**: Օրինակ՝

27) **Mother:** “Why are you home from school so early?”

Son: “I was the only one who could answer a question.”

Mother: “Oh, really? What was the question?”

Son: “Who threw the eraser at the principal?” (**զարմանք**)

<<http://www.hydepark21.com/topic/anecdote>>

28) In a car in the middle of Colorado a wife says to her husband, “**Oh** Dear George, I’m afraid the house is going to burn down, I’m sure I left the iron on.”

George: “The house will not burn down Dear, don’t worry”

Wife: “Now how can you make a statement like that”

George: “Cause I forgot to turn off the water in the bathtub!”

(**վախ**)

<<http://lingualeo.com/uk/jungle/the-house-is-going-to-burn-344401>>

Որոշ ծայնարկություններ, սակայն, հաստատուն կերպով արտահայտում են որոշակի հույզեր և կրում են պայմանական բնույթ: **“Ah”** և **“oh”** ծայնարկությունները հաճախադեպ կիրառություն ունեն, թեև **“ah”** ծայնարկության կիրառման առաջ-

նայնությունը պատկանում է արական սեռի հաղորդակցվողներին, իսկ **“oh”** ձայնարկությունը՝ իգական սեռի:

Նախադասություններում հույզերի ուժեղ նշույթավորվածություն ձեռք է բերվում հուզարտահայտչական ներդրյալ կառույցների միջոցով (տվյալ դեպքում՝ **ձայնարկությունների**): Նման հուզարտահայտչական նշանները, որոնք տեղաբաշխված են խոսքի սկզբում, մեջտեղում և վերջում, օժտված են ուշադրությունը ընդհանուր տեղեկատվությունից շեղելու և արտահայտվող հույզի վրա սևեռելու ունակությամբ:

Ինչ վերաբերում է տարբեր հուզարտահայտչական իրավիճակներում տղամարդկանց և կանանց օգտագործած ձայնարկություններին, կարելի է եզրակացնել, որ **ուրախության և զայրույթի** հույզերը քանակով առավել հաճախադեպ են:

Ատորև ներկայացվում է անգլիական «կենցաղային» անեկդոտներում բառային մակարդակում լեզվական անհատի գենդերային առանձնահատկությունների վիճակագրությունը (աղյուսակը՝ Ա. Տ. Կնյազյանի):

Բառային միջոցները կանանց և տղամարդկանց խոսքում

	Կանայք	Տղամարդիկ
Հուզագնահատողական բաղադրիչով բառապաշար	30%	70%
Հայիոյական բառապաշար	15%	85%
Կոչական բառեր	55%	45%
Փոքրացուցիչ-փաղաքշական բառեր	70%	30%
Նորաբանություններ, տերմինաբանական/մասնագիտական բառապաշար	5%	95%
Ուժգնացնող բառեր	60%	40%
Ձայնարկություններ	55%	45%

Ոչինչ այդքան պարզ չի արտացոլում մարդու ընդհանուր կրթական մակարդակը, քաղաքական, փիլիսոփայական, էսթետիկական և բարոյական հայացքները, ինչպես նրա խոսքը: Հենց միայն մարդկանց խոսքից կարելի է իմանալ նրանց մտքերը, զգացմունքները և մղումները, պատկերացում կազմել նրանց ընդհանուր զարգացածության մասին: Մարդու խոսքը պայմանավորված է շատ գործոններով՝ նրա սեռով, սոցիալական դիրքով, տարիքով, մասնագիտությամբ: Տղամարդիկ և կանայք ունեն իրենց հատուկ հոգեբանական առանձնահատկություններ, որոնք ներազդում են նրանց խոսքային միջոցների ընտրության վրա և տարբերում նրանց խոսքը մյուսների խոսքից: Այդ պատճառով ամեն մի բանավոր կամ գրավոր արտահայտություն կարող է արտացոլել կին-խոսողի կամ տղամարդ-խոսողի անհատականությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս են գենդերային կարծրատիպերը ներազդում կանանց և տղամարդկանց խոսքի վրա:

2. Արդյո՞ք *ձայնարկությունների, գռեհիկ, ուժգնացնող և կոչական բառերի* դերը հուզական խոսքում կարելի է կապել հուզական ազդակների հետ, որոնք արտահայտվում են խոսքում:

3. Արդյո՞ք կանայք ավելի քիչ են օգտագործում *կոպիտ և հայիոյական բառապաշար*:

4. Արդյո՞ք անգլիական անեկդոտներում գենդերային խտրականությունը ստեղծվում է տղամարդկանց՝ որպես գե-

րիշխող և կանանց՝ որպես հնազանդվող սեռերի ներկայացման միջոցով:

5. Ինչպիսի՞ վարքագիծը կարելի է համարել ագրեսիվ:

Քննարկման թեմաներ

1. Տղամարդիկ հայիոյախոսությունն օգտագործում են իրենց «տղամարդկային առաջնայնությունը», արական սեռին պատկանելությունը ցուցադրելու համար:

2. Ինչպե՞ս եք վերաբերում այն երևույթին, երբ անպարկեշտ բառերը օգտագործվում են կարծես ընկերաբար, անկաշկանդ, որպես զրուցակցի նկատմամբ դրական վերաբերմունքի դրսևորում:

Գործնական առաջադրանքներ

1. Զանազան կերպարներ կիրառվում են գովազդներում, որոնք թելադրվում են կանանց և տղամարդկանց հասարակական կարծրատիպերով (օրինակ՝ մանկական և կենցաղային ապրանքների, սննդամթերքի գովազդում ներկայացվում է մոր և կնոջ կերպարը, թանկարժեք ապրանքների գովազդում ներկայացվում է գործարար տղամարդու կերպարը): Ներկայացրեք օրինակներ կանանց և տղամարդկանց հասարակական կարծրատիպերի վերաբերյալ գովազդներում:

2. Արտաքին ագրեսիա (հարձակողականություն խոսքում և խոսքային վարքագծում) դրսևորելու տղամարդկանց առավել հակվածությունը մատնանշում են հոգեբանության հետազոտու-

թյունների արդյունքները: Ամերիկացի հոգեբան Ա. Անաստազին ագրեսիվությունը դասում է տղամարդկանց հիմնական անձնային հատկությունների շարքին (Анастаси, 1982, 8-15): Մեկնաբանեք Ա. Անաստազիի կատարած ուսումնասիրությունը:

Գրականություն

1. **Анастаси А.**, Дифференциальная психология //Психология индивидуальных различий. Тексты / Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я.Романова. М.:Изд-во Моск. ун-та, 1982. с. 8-14.
2. **Гак В.Г.**, Язык как форма самовыражения народа/ Сб. статей: Язык как средство трансляции культуры. М.: Наука, 2000.
3. **Жельвис В.И.**, Поле брани. Сквернословие как социальная проблема. М.: Изд-во Московского университета, 1997.
4. **Степанов Ю.С.**, Основы языкознания. М.: Просвещение, 1969.
5. **Фомина З.Е.**, Эмоционально-оценочная лексика современного немецкого языка: Автореф. дис. ... доктора филол.наук. М., 1996.
6. **Pervin L.A., John O.P.**, Personality. Theory and research. New York, 1997.
7. **Sharpe J.**, The Adult Joke Book. London: Arcturus Publishing Limited, 2004.

Համացանցային աղբյուրներ

- <http://www.ajokeaday.com/clasificacion.asp?ID=48&Pagina=10>
(05.07.2010)
- <http://www.ajokeaday.com/Clasificacion.asp?ID=54&Pagina=5>
(05.10.2014)
- <http://www.free-funny-jokes.com/talking-italian.html> (08.06.2011)
- <http://www.funs.co.uk/fs/s24.html> (05.10.2014)

http://www.guy-sports.com/jokes/good_jokes.htm (05.10.2014)
<http://hotjokes.net/i-dont-know/> (08.09.2013)
<http://www.hiren.info/funstuff/funny-jokes/if-i-wasnt-rich>
 (02.02.2011)
<http://www.hydepark21.com/topic/anecdote> (08.09.2013)
<http://jokstop.com/love/0ay> (10.05.2012)
<http://jokstop.com/13> (05.10.2014)
http://www.jokebuddha.com/joke/Adam_talks_to_God_1 (05.10.2014)
<http://jokes.cc.com/funny-marriage-jokes/7ra4ct/the-husband-s-best-friend> (05.10.2014)
<http://jokes.cc.com/funny-dark-humor/d6vjuu/the-mortician-s-big-discovery> (05.10.2014)
<http://www.jokesoftheday.net/jokes-archive/2015/01/05/> (05.10.2014)
<http://www.laughfactory.com/jokes/sexist-jokes> (05.11.2015)
<http://lingualeo.com/uk/jungle/the-house-is-going-to-burn-344401>
 (20.10.2014)
<http://www.native-english.ru/anecdotes/3721> (08.10.2014)
<http://www.native-english.ru/anecdotes/1661> (08.10.2016)
<http://www.shabbir.com/jokes/blond/blondguy.html> (02.08.2010)
<http://www.touchinglovestories.com/lovestory120.htm> (02.08.2010)
<http://www.xjokes.net/broken-leg.html> (08.09.2013)

ՄԱՍ 2

ԽՈՍՈՒՅԹԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ

2.1. Հետազոտական աշխատանք

Task 1.

Make notes on what aspects of women's language use are being represented as “*deficient*”.

➤ Some pre-feminist work as well as feminist work on gender and language has been characterised as a “***deficit model***”. O. Jespersen's, P.Trudgill's and R. Lakoff's positions on women's language have been described as “***deficit***” models. Read Otto Jespersen's (1922) chapter, *The woman*, in his book “Language: its nature, origins and development”, Peter Trudgill's work on ***language and sex*** in *Sociolinguistics* (1983) and Robin Lakoff's “Language and Woman's Place” (1975) and try to identify the elements of a “***deficit***” approach.

➤ Is it right to describe O.Jespersen's, P.Trudgill's and R. Lakoff's representations of women's language as a “***deficit model***”?

➤ Write a report on “***deficit***” approaches to gender and language use.

Task 2.

Read Dale Spender's chapter *Language and reality: who made the world?* in her book "Man Made Language" (1980).

➤ Identify as many of her claims about men's linguistic agency as you can find.

➤ How convincing do you find these claims about the power of patriarchy?

➤ Maria Black and Ros Coward (1981) critiqued Spender's notion of "*patriarchy*". Read and make notes on M. Black and R.Coward's (1981) critique of "*Man Made Language*".

➤ Write a review of Dale Spender's "*Man Made Language*".

Task 3.

Use the World Wide Web to track down some popular reviews of Deborah Tannen's "*You Just Don't Understand!*"

➤ Trace D.Tannen's understanding of male-female miscommunication.

➤ Write up a report of D.Tannen's study.

➤ Comment on the following: *Men are from Mars, Women are from Venus* (John Gray) What does this suggest about current understandings of gender and gender relations?

Task 4.

Carry out a literature review of empirical studies of gender tendencies in the use of *tag questions* in English.

➤ Make a list of the different functions of *tag questions* that have been identified.

➤ Carry out your own study of use of tag questions in D.H.Lawrence's "*Sons and Lovers*" and "*The Rainbow*".

➤ Audiotape a mixed-sex group of five or six people in an informal setting. Analyse and identify all the **tag questions** in the conversation (different functions and frequency of **tag questions**).

➤ Summarise your findings.

Task 5.

Read West and Zimmerman's (1977, 1975) works on *overlapping speech*.

➤ Indicate developments in the understanding of how ***overlapping speech*** may not constitute an interruption.

➤ Read some later studies of gender and ***overlapping speech*** (Beattie 1981, Talbot 1992). Document how the field developed during this period in terms of methodological approaches and understandings.

➤ Audio-record ten minutes of talk between a man and a woman. Identify similarities and any differences.

➤ Summarise your findings.

Task 6.

Write three different dialogues between 1) two male speakers, 2) two female speakers, and 3) a female speaker and a male speaker.

➤ Think of and make a list of cases in which people you know vary their language use with the sex of the person they are talking to. In what ways do they do this?

➤ Summarise your findings.

Task 7.

Search the World Wide Web for reviews of “*Language and Sexuality*” by Deborah Cameron and Don Kulick (2003).

➤ Read these reviews carefully, noting particularly how much they are descriptive and evaluative, and how negative comments are phrased.

➤ Read D. Cameron and D. Kulick’s “*Language and Sexuality*” yourself and make your own review.

Task 8.

Explore why Judith Butler’s book “*Gender Trouble*” (1999) is subtitled “*Gender and the Subversion of Identity*”.

➤ Consider the notion of “*gender identity*” in relation to language.

➤ Comment on the concept of “*identity*”.

➤ Explore the position taken by discursive psychologists on identity (e.g. Edley 2001).

➤ Write a paper on the diversity of understandings of “*gender identity*”.

Task 9.

Investigate the derogatory use of ‘*big-ass*’, ‘*whore*’, ‘*tits*’, ‘*slag*’, ‘*tart*’, ‘*bitch*’, ‘*bird*’ and ‘*cow*’ in modern English.

➤ Ask native speakers of English of different ages about their uses and understandings of these terms.

➤ Traditionally used of women, to what extent are these terms now used also of men, and, if they are used of men, what meanings do they carry? Are these terms as derogatory as when used of women?

➤ Summarise your findings.

Task 10.

Using a paremiological dictionary collect proverbs about women and men.

- Find gender stereotypes in proverbs.
- What profile emerges?
- What aspects of women's and men's use of language feature in proverbs? How homogeneous is this and how much variability is there?
